


# ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

ДІЕГІІЕГІАІДІ

دييجيگادو

Հրատարակումին Գահիրեի ՀԲԸՄ-ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



ՀՈԿՏԵՄԲԵՐԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՍԱՐՈՒԻԱՆԻ ՄԱՏԻՏՈՎ  
(Նիւթը տեսնել էջ 11 )

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

**ԽՍՐԱԳԻՐ**  
Մարուշ Երամեան

**ԽՍՐԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ**  
Մարտիկ Պալաեան

**ՍՐԱԳՐԻՉ  
ՎԵՐՍՏՈՒԳԻՉ**  
Անայիս Ճիգմեճեան

**ԳԵՂԱՐՈՒԵՏՍԱԿԱՆ  
ՁԵԽՈՐՈՒՄ**  
Շահե Լուսարարեան

**ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ**  
Nubar Digital

**Գահիրեի ՀԲԸՄ-ի  
լուրերուն հետեւեցէք  
www.agbuegypt.com  
կայքէջով:**

**Ծանօթացէք «Հայաստան  
եւ Հայերը Արաբական  
Սամուլին մէջ. 1876-1923»  
հաւաքածոյի նիւթերուն  
www.arminmedia.com  
կայքէջով:**

**«Տեղեկատու»ի յօդուածա-  
գիրներուն արտայայտած  
կարծիքները անպայման-  
օրէն չեն ներկայացներ  
Գահիրեի ՀԲԸՄի պաշտօ-  
նական տեսակետները:**

**ԹԻԻ 113 ՆՈՐ ՇՐՋԱՆ,  
ՀՈԿՏԵՄԲԵՐ 2024**

Խմբագրական Մտորումներ	1
Կոչ Էնթընի Պլինքընի հայ գերիներուն հարցով <b>Պերճ Սեդրակեան</b>	2
ՀԲԸՄիութեան 93րդ Պատգամաւորական Ժողովը	4
Հրաժեշտի Երեկոյ	5
Մարդը ի՞նք կը կերտէ իր ապագան <b>Անժիկ Յակոբեան-Կանիմեան</b>	8
Զերմ Պաղպաղակասեղան <b>Անժիկ Յակոբեան-Կանիմեան</b>	9
Հոկտեմբերեան Պանծալի Յաղթանակի յիշատակին	11
ՀԲԸՄի Գահիրեի Մասնաճիւղի Զեկուցաբեր Ընդհանուր Ժողովը	14
«Ապագայ» Սեմինարներուն Երկրորդը	15
Աստուածներու եւ Մարդոց Մասին	16
Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն <b>Անժիկ Յակոբեան-Կանիմեան</b>	19
Սարուխան եւ Շահպազ	20
Մեր Արխիւէն՝ Երկու Եգիպտահայեր	21
Տարօն Աճեմօղլու Նոպէլեան մրցանակակիր	24
Մամլոյ Հաղորդագրութիւն <b>դոկտ. Վաչէ Ղազարեան</b>	26
Մեր Կորուստները՝ 1.Վահան Դելփեան	28
<b>Նորա Գոլոյեան-Քէօհնէլեան</b>	
2.Աննա Նշանեան	32
3.Կարպիս Ափրիկեան	33
Իրաքցին <b>Սօսի Ներեպեան-Յակոբեան</b>	34
Աղեքսանդրիոյ Յունա-հռոմէական Թանգարանը <b>Սօսի Ներեպեան-Յակոբեան</b>	36
Կարճ Լուրեր	37
Աղեքսանդրիոյ Կամբի Մրցաշարքը <b>Սօսի Ներեպեան-Յակոբեան</b>	41
Գահիրեի ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐԻ մրցաշարքը <b>Սօսի Ներեպեան-Յակոբեան</b>	42
Այվազովսքին եւ Ձկնորսը	44
Անդամական - Շնորհակալութիւն	



## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Աշուն է եւ վերամուտ: Նաեւ Հայաստանի Հանրապետության անկախության տօնակատարութիւն, ՀԲԸՄիութեան 93րդ ընդհանուր ժողով, դեսպանի ողջերթ, Հոկտեմբերեան յաղթանակներու նշում, նոր կազմուող ընտանիքներ, պասքէթպոլի երկու մրցաշարք, կորուստներ...

Մէկ խօսքով՝ կեանք, որ իր սովորական հունով կ'ընթանայ եգիպտահայ համայնքի առօրեային մէջ:

Եթէ այսքան ըլլար միայն, երջանիկ պիտի զգայինք մենք մեզ, բնական հունով ընթացող մեր կեանքին համար: Սակայն մեր շուրջ աշխարհը կ'եռեւեկի անսովոր դէպքերով, որոնք կը սաստեն Միջին Արեւելքի մեր հին ու աւանդական համայնքներուն կեանքը, կը սպառնան հովին տալ տասնամեակներու աշխատանքի արդիւնքը, կը սպառնան նոյնիսկ քանդել այդ համայնքները, որովհետեւ երբ գաղթը կրկին դառնայ միակ ելքը սփիւռքահայուն, ի՞նչ կը մնայ համայնքէն:

Սկիզբը Սուրիոյ անարդար պատերազմն էր, որ բազմահարիւր հայեր տեղահան ըրաւ, ստիպեց գաղթել դէպի նոր աշխարհներ:

Ապա՝ ահաւոր ջարդը Պաղեստինի մէջ, ուր փոքրաթիւ բայց աւանդական հայ համայնք մը ունինք: Սակայն մեզ մտահոգողը երեւոյթն է, օր ցերեկով ընթացող ջարդը, որուն առջեւ աշխարհը կրկին – ինչպէս ըրած էր հայոց Ցեղասպանութեան օրերուն – թաքուն հաշիւներէ մղուած, երեսը անդին կը դարձնէ եւ ոչ մէկ ճիգ կը թափէ դադրեցնելու ընթացող ահաւոր ջարդը, որ արդէն մէկ տարին բոլորեց Հոկտեմբեր 7-ին:

Օրական 40 երեխաներու սպանութիւնը արդէն ցոյց կու տայ գալիք սերունդը արմատախիլ ընելու կամ խեղաթիւրելու միտումը: Իսկ եթէ հաշուենք 1948 թուա-

կանէն ի վեր Պաղեստինի զոհերուն թիւը, հաւանաբար այդ թիւը գերակշիռ ըլլայ հայոց Ցեղասպանութեան եւ Ողջակիզումի զոհերուն թիւէն, միասնաբար:

Ասիկա կը գրենք ո՛չ միայն մտահոգած մեր համայնքներով, բայց մանաւանդ մարդկային առումով, որովհետեւ ի տես կատարուածին, վերջնականապէս կը դադրինք հաւատք ընծայելէ «մարդկային արդարութեան»:

Ոտնձգութիւններ կ'ըլլան նաեւ Լիբանանէն ներս, որ յիսուն տարիներէ ի վեր ընթացող դէպքերէն արդէն արիւնաքամ, ա՛լ ի վիճակի չէ դիմագրաւելու իր դէմ սանձազերծուած այս յարձակումները:

Համաշխարհային Երրորդ պատերազմ պիտի սկսի կը փսփսան, կ'ըսեն, բացայայտօրէն կը յայտարարեն. բայց անցնող աւելի քան տասը տարիները ի՞նչ էին, երբ երկիրներ քանդուեցան, կողոպտուեցան, զոհուածներուն թիւը հաւանաբար միլիոնը անցաւ – անկախ այդ զոհուածներուն ազգութենէն, կրօնական թէ քաղաքական պատկանելիութենէն:

Միջին Արեւելեան Սփիւռքի գաղութները ինչպէ՞ս գոյատեւեն այսքան թոհութի մէջ: Կը մտահոգուինք եւ կը տագնապինք, որովհետեւ այդ գաղութները, որոնց շարքին է նաեւ եգիպտահայ գաղութը, հիմը կը կազմեն Սփիւռքին, իրենց աւելի քան մէկ դարու ներկայութեամբ, կազմակերպուածութեամբ եւ հայ ոգին մի՛շտ արթուն պահելու իրենց յանձնարութեամբ:

Կը մնայ մեզի յուսալ եւ սպասել, աղօթելով որ տարածաշրջանը կը խաղաղի, իսկ փոթորիկը նուազագոյն վնասներով կը հեռանայ եգիպտոսէն, ուր գրեթէ երկու դարէ ի վեր հայութիւնը ապրած է եւ կը շարունակէ ապրիլ:

Խաղաղ օրեր բոլորին եւ յաջողութիւն մեր աշակերտներուն եւ ուսանողներուն:



## ԿՈՉ ԷՆԹԸՆԻ ՊԼԻՆՔԸՆԻ, ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐՈՒ ՀԱՐՑՈՎ



Մեծարգոյ Էնթընի Ճ. Պլինքըն  
Պետքարտուղար  
ԱՄՆ Պետական բաժին  
2201 Շ փողոց NW  
Ուաշինգթըն, ԿՇ 20520

23 Օգոստոս 2024

Յարգելի՛ պետքարտուղար Պլինքըն,

Որպէս Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ)՝ աշխարհի մեծագոյն, անշահաբեր համահայկական կազմակերպութեան նախագահ, նախ եւ առաջ ցանկանում եմ երախտագիտութիւն յայտնել Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ խաղաղ բանակցութիւններուն նպաստելու Ձեր ջանքերու համար:

2024 թուականի Յունիսի 20-ին Ատրպէյճանի նախագահ Իլիհամ Ալիեւի հետ հեռախօսազրոյցի ընթացքին Դուք յայտարարեցիք, որ Միացեալ Նահանգները յանձնառու է աջակցիլ ՄԱԿ-ի կլիմայի փոփոխութեան համաժողովի բարեյաջող անցկացման (COP29), որ տեղի պիտի ունենայ այս Նոյեմբերին, Ատրպէյճանի մայրաքաղաք Պաքուի մէջ: Այդ նպատակով Դուք Ատրպէյճանին յորդորեցիք հաւատարիմ մնալ մարդու իրաւունքներու պաշտպանութեան միջազգային պարտաւորութիւններուն եւ յանձնառութիւններուն եւ ազատ արձակել անարդարօրէն կալանաւորուած բոլոր անձանց, անյապաղ կերպով: Այս զրոյցը երկու ամիս առաջ էր: Կալանաւորներուն վերաբերեալ ԱՄՆ-ի յստակ եւ հետեւողական դիրքորոշումը անգամ մը եւս յայտարարուեր էր Ձեր խօսնակին կողմէ, տակաւին երկու շաբաթ առաջ:

Ես կը խօսիմ ՀԲԸՄ-ի՝ աշխարհի մէջ սփռուած բազմաթիւ անդամներուն, մասնաւորապէս ԱՄՆ բնակող հայութեան անունով, բարձրաձայնելով մեր ահազնացող անհանգստութիւնը, թէ Ձեր խօսքերը անուշադրութեան մատնուեր են եւ շարունակուեր են անտեսուիլ:

Յատկանշական է, որ հայ գերիներուն՝ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) կառավարութեան նախկին ութ անդամներուն մօտալուտ ազատ արձակման մասին որեւէ լուր չկայ: Անոնք ձերբակալուեր էին անցեալ Սեպտեմբերին, Ատրպէյճանական ռազմական յարձակումէն ետք, աւելի քան 120,000 հայե-



րու հետ Արցախը պարտադրուած լքելու ճանապարհին: Մէկ օրուան մէջ ձերբակալուեցան Հանրապետութեան երեք նախկին նախագահները՝ Արայիկ Յարութիւնեանը, Բակօ Սահակեանը, Արկադի Ղուկասեանը, ինչպէս նաեւ այլ նախկին պաշտօնեաներ Դաւիթ Բաբայեանը, Լեւոն Մնացականեանը, Դաւիթ Իշխանեանը եւ Դաւիթ Մանուկեանը: Նոյն վիճակին զոհ դարձաւ նաեւ Արցախի նախկին պետնախարար եւ ՀԲԸՄ Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ Ռուբէն Վարդանեանը, որ մեր կարկառուն բարերարներէն է եւ մեծ ներդրում ունի Հայաստանի եւ միջազգային մարդասիրական նախաձեռնութիւններուն մէջ:

Նոյնքան մտահոգիչ է այն փաստը, որ հայ ռազմագերիներ կը շարունակեն մնալ կալանքի տակ, որ զիրենք ազատ արձակելու՝ 2020 թուականին Ատրպէյճանի կողմէ ստորագրուած փաստաթուղթի խախտում է: Անորոշ է նաեւ անյայտ թիւով քաղաքացի գերիներու հարցը: Այս բանտարկեալները կը շարունակեն կալանքի տակ մնալ, ներպետական եւ միջազգային իրաւունքի, քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքներու միջազգային դաշնագրի եւ մարդու իրաւունքներու եւրոպական պայմանագրութեան ակնյայտ խախտումով, որոնցմէ մեծապէս կախուած է տարածաշրջանի խաղաղութիւնն ու կայունութիւնը, եւ որոնց Ատրպէյճանը անդամ երկիր է: Իւրաքանչիւր օրը օրհասական է այս երիտասարդ հայ զինուորներուն կեանքին համար, որոնց ընտանիքները չորս տարի է կը սպասեն անոնց ապահով վերադարձը: Այս բանտարկեալներուն ազատ արձակումը կենսական նշանակութիւն ունի խաղաղութեան հաստատման գործընթացին մէջ:

Անշուշտ, այս Նոյեմբերին Պաքուի COP29-ի կայացումը, առաւել այն «խաղաղութեան COP» ներկայացնելու Ատրպէյճանի նկրտումները, լրջօրէն կը խաթարուին, եթէ բանտարկեալները շարունակեն մնալ կալանքի տակ: Եւ մենք բոլոր հիմքերն ունինք ենթադրելու, որ եթէ անոնք ազատ չարձակուին մինչեւ COP29-ը, ապա, պարզ է որ ազատ չեն արձակուիր անկէ ետք, երբ նախագահ Ալիեւը ա՛լ շարժառիթ չունենայ ատիկա ընելու համար:

Ժամանակն է, որ Միացեալ Նահանգները գործադրէ իր առաջնորդութիւնը՝ պահպանելու տիրող աշխարհակարգը, յատկապէս ներկայիս մեծաթիւ հակամարտութիւններու պարագային, որոնք ամբողջ աշխարհի խաղի կանոնները կը խախտեն: Ամերիկայի, որպէս ազատ աշխարհի առաջնորդի համբաւը, կարծես վտանգուած է՝ անմեղ կեանքեր խլող մեծաքանակ պատերազմներու եւ թշնամական պայմաններու մէջ:

ԱՄՆ-ի եւ ամբողջ աշխարհի հայութիւնը կը շարունակէ խորապէս մտահոգուած մնալ իր հայրենակիցներու ճակատագրով, որոնք չափազանց երկար ժամանակ է, որ գերութեան մէջ են: Մենք երախտապարտ կը մնանք այս հարցին զարգացումներուն տեղեկանալով, մասնաւորապէս, թէ որքանով Ձեր ջանքերը կը նպաստեն Ատրպէյճանէն բոլոր հայ գերիներուն անյապաղ ազատ արձակումին:

Երախտապարտ եմ Ձեր ուշադրութեան համար,

Յարգանքով՝

**Պերճ Սեդրակեան**

**ՀԲԸՄ նախագահ**



## ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ 93ՐԴ ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

ՀԲԸՄիութեան 93րդ Պատգամաւորական ժողովը տեղի ունեցաւ 10-12 Հոկտեմբերի շաբաթավերջին, Նիւ Եորքի մէջ:

Աշխարհի չորս կողմէն բազմաթիւ պատուիրակներ, անդամներ եւ ընկերներ եկած էին այս ժողովին մասնակցելու համար, բայց մանաւանդ ողջերթ մաղթելու նախկին նախագահ Պերճ Սեդրակեանին եւ բարի երթ ցանկալու նորընտիր նախագահ Սէմ Սիմոնեանին:

Շաբաթ, 12 Հոկտեմբերի գլխաւոր նիստէն ետք, Mandarin Oriental-ի շքեղ սրահին մէջ տեղի ունեցաւ Կեդրոնական գրասենեակի կազմակերպութեամբ **կալա** երեկոյ մը, որ նուիրուած էր Պերճ եւ Վերա Սեդրակեաններուն:

Պերճ Սեդրակեանի գործունէութիւնը ՀԲԸՄիութեան շարքերէն ներս սկսած է յիսուն (50) տարի առաջ, նախ Պէյրութի (Լիբանան), ապա Նիւ Եորքի (ԱՄՆ) մէջ:

Պերճ եւ Վերա Սեդրակեաններու շրջանը կը յատկանշուի կազմակերպութեան աճով, արդիւնաւէտ ղեկավարութեամբ, մշակութային ժառանգութիւնը իմաստաւորելու եւ նոր սերունդին փոխանցելու արդիւնաւէտ ջանքով:

Յատկապէս այս առիթով պատրաստուած են երկու կարճ տեսանիւթեր, մէկը «Պերճ Սեդրակեան Հեռատես Առաջնորդը» խորագրով (8:52 վրկ.), ուր ՀԲԸՄի պատասխանատու մօտիկ անձնաւորութիւններ, ինչպէս ԱՄՆի դեսպան Էտուրըտ Ճէրէճեան, Հայաստանի ՀԲԸՄիութեան նախկին տնօրէն Աշոտ Ղազարեան, ՀԲԸՄիութեան Հայաստանի նախագահ Վազգէն Եագուպեան, ՀԲԸՄի



Հոգաբարձուներու խորհուրդի փոխ-նախագահ Ճոզէֆ Ուղուրլեան կը խօսին նախկին նախագահ Պերճ Սեդրակեանի գործունէութեան եւ նուաճումներուն մասին: Տեսերիզը վերջ կը գտնէ տիար Պերճ Սեդրակեանին ուղղուած շնորհակալական խօսքերով, իր տարիներու ժիր եւ արդիւնաւէտ աշխատանքին համար:

Երկրորդ տեսերիզին մէջ, որ կը կրէ «Պերճ եւ Վերա Սեդրակեան - Ծառայութեան եւ Բարեկամութեան Ժառանգութիւն մը» խորագիրը (7:30 վրկ.), բարեկամներ, ինչպէս Անիթա Անսըրեան՝ ՀԲԸՄիութեան Նիւ Եորքի գրասենեակին ընդհանուր պատասխանատուն, Սեդա Տէմիրճեան՝ մարդաբան, Սինան Սինանեան՝ ՀԲԸՄի Հոգաբարձուներու Խորհուրդի անդամ, Նիլա Ֆրսթըքճեան՝ յատուկ միջոցառումներու յանձնախումբի ատենապետուհի, Ամերիկայի Արեւելեան Թեմի առաջնորդ Մեսրոպ Սրբազան Պարսամեան, կը խօսին Պերճ Սեդրակեանի ընկերային երեսակին

մասին, անոր առաջնորդողի եւ որեւէ մթնոլորտի մէջ եռանդ եւ ուրախութիւն մուծելու կարողութիւններուն մասին, կը պատմեն Վերա Սեդրակեանի տաք, մարդամօտ խառնուածքին, օգնելու պատրաստակամութեան եւ անսպառ համբերութեան մասին, մանաւանդ իր ամուսնոյն գործի բերումով բացակայութիւններուն հանդէպ, եւ կը ներկայացնեն երկու կարող եւ լիովին ազգասէր դուստրեր դաստիարակած ըլլալու իրողութիւնը:

ՀԲԸՄիութեան ծրագիրներուն մէջ արուեստի եւ երաժշտութեան նուիրուած ձեռնարկներն ու մանաւանդ Նիւ Եորքի  
շաբ. էջ 10 →



## ՀՐԱԺԵՇՏԻ ԵՐԵԿՈՅ ԴԵՍՊԱՆԻՆ

Գահիրէի Ազգային Առաջնորդարանը հրաւիրած էր միութիւններու եւ յանձնախումբերու ատենապետներն ու պատասխանատուները ողջերթի երեկոյի մը, ՀՀ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան տիար Հրաչեայ Փոլատեանի Գահիրէէն վերջնական մեկնումին առիթով:

Երեկոյթը տեղի ունեցաւ Պըլըքտանեան սրահէն ներս, Շաբաթ, 21 Սեպտեմբեր 2024-ի երեկոյեան:

Իր սրտի խօսքը ըսաւ թեմիս Բարեջան Առաջնորդ Տ. Աշոտ Եպս. Մնացականեան.

«Մեծարգոյ պարոն Դեսպան եւ ազնուափայլ Տիկինը,

Եգիպտահայ մեր համայնքի սիրելի ներկայացուցիչներ եւ պատասխանատուներ,

Աւանդութիւն դարձած է որ երբ Հայաստանի Հանրապետութեան դեսպան մը իր ծառայութիւնը աւարտէ Եգիպտոսի մէջ եւ մեկնի Հայաստան կամ ծառայութեան այլ վայր, համայնքի պատասխանատու մարմիններուն հետ ողջերթի երեկոյ մը կը կազմակերպենք, եւ այսօր կարգը մեր սիրելի դեսպան Հրաչեայ Փոլատեանինն է:

Չեմ ուզեր մասնաւոր անդրադառնալ, բայց տեղին է նշել, որ իմ ծառայութեանս ընթացքին, ինչպէս նախորդ բոլոր դեսպաններուն՝ յանձինս Սերկէյ Մանասարեանի, Ռուբէն Կարապետեանի, Արմէն Մելքոնեանի, Կարէն Գրիգորեանի, այնպէս ալ Հրաչեայ Փոլատեանին հետ՝ միշտ ունեցած եմ բարի, մտերմիկ յարաբերութիւններ ծառայական գործին առընթեր: Պիտի շեշտեմ եւ հաստատեմ, թէ բոլոր դեսպանները, նաեւ պարոն Փոլատեանը, որ դեսպան ըլլալէ առաջ ծառայած է Եգիպտոսի դեսպանատան մէջ, շատ լաւ գիտեն, թէ համայնքը միշտ նեցուկ եղած է Հայաստանի Հանրապետութեան, ի դէմս դեսպանատան, միշտ օգնական եղած է ոչ միայն նիւթապէս, այլ նաեւ իր ներկայութեամբ եւ բարոյական օժանդակութեամբ:

Ամէն պարագայի կրկին պիտի շեշտեմ, թէ ինձի համար, իբրեւ Առաջնորդի, մեր համայնքի իւրաքանչիւր անդամին, յատ-



կապէս Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչի, այս պարագային դեսպանատան, Դեսպանին եւ անձնակազմին հետ իմ յարաբերութիւններս միշտ փորձած եմ կառուցել զուտ ազնիւ, անկեղծ, բարեկամական, ընկերային մթնոլորտի մէջ, որ կը կարծեմ, բոլոր յաջողութիւններուն գրաւականն է: Կարելի չէ արդիւնքի հասնիլ միայն պաշտօնական սահմանափակ յարաբերութիւն ստեղծելով: Եթէ այդ մտերմիկ յարաբերութիւնը չըլլայ, չի կրնար փոխհասկացողութիւն ըլլալ, իսկ ուր որ չկայ փոխհասկացողութիւն, կարելի չէ լաւագոյն կերպով իրականացնել բոլոր այն ծրագիրները, որոնք դրուած են իւրաքանչիւր պատասխանատու անձի առջեւ: Այս առումով, ուրախութեամբ կրնամ յայտարարել, որ դեսպան Հրաչեայ Փոլատեանի Եգիպտոսի մէջ երեքամեայ ծառայութեան ընթացքին նոյն այդ գործելաոճը, նոյն այդ ոգին մեր առջեւ ունենալով, կրցած ենք ձեռք ձեռքի տուած առաջ ընթանալ եւ ընել ոչ միայն կարելին, այլ լաւագոյնը՝ նախ համայնք եւ դեսպանատուն, ապա համայնք եւ հայրենիք յարաբերութիւններուն մէջ, ինչպէս նաեւ Եգիպտոսի եւ Հայաստանի յարաբերութիւններուն սերտացումին ուղղուած իւրաքանչիւր ծրագիր իրականացնելու աշխատանքին մէջ:

Անշուշտ միշտ չէ որ մեր ցանկութիւնները իրականութիւն կը դառնան. թերացումներ կրնան ըլլալ, պարագաներու բերումով երբեմն ալ գաղափարական տարբերութիւններ, յատկապէս վերջին տարիներուն՝ պատերազմէն ետք տիրող իրավի-



ճակը նկատի ունենալով: Սակայն, ի վերջոյ մեզի համար անձերը չեն որ կը ներկայացնեն հայրենիքը, այլ գաղափարախօսութիւնը եւ ժողովուրդը: Այս առումով, դարձեալ պիտի շեշտեն, որ պարոն Դեսպանը, հակառակ տիրող դժուար կացութեան, երբեմն դիւանագիտական ոչ յստակ իրողութեան առջեւ գտնուելով, կրցած է պահել այն ջերմ յարաբերութիւնը, որ տարիներու ընթացքին ստեղծուած է Հայաստանի եւ Եգիպտոսի միջեւ:

Մեզի կը մնայ յաջողութիւն մաղթել պարոն Դեսպանին եւ վստահօրէն նշել որ իր վերադարձին, ուր ալ որ պաշտօնավարէ, պիտի շարունակէ լաւագոյնս իր ծառայութիւնը բերել մեր հայրենիքին՝ անկախաբար հայրենիքի մէջ գործող կառավարութեան մօտեցումներէն, անկախաբար տիրող քաղաքական մթնոլորտէն: Արտաքին Գործերու Նախարարութեան դիւանագէտ պաշտօնեաներուն եւ անձերուն փորձը եւ նպատակը հայրենիքին լաւագոյն կերպով ծառայելն է, եւ այդ ծառայութիւնը իրենց համար միշտ կը մնայ առաջնահերթ եւ բոլոր տեսակի անհատական յարաբերութիւններէն բարձր:

Սիրելի պարոն Դեսպան, այսօր Եգիպտոսի համայնքի փոքրաթիւ մասն է որ ներկայ է. հրաւիրուած են համայնքի մարզական, մշակութային, բարեսիրական կրթական եւ հոգեւոր կառոյցներու պատասխանատուներ եւ վարչականներ: Վստահ եմ որ եթէ ազատ հրաւեր ըլլար, շատեր ներկայ պիտի գտնուէին: Եւ կը փափաքէի նշել որ յատկանշական է այս օրը նաեւ այն առումով, որ կը զուգահիշի Հայաստանի Հանրապետութեան անկախութեան օրուան՝ 33-րդ տարեդարձին:

Այսօր դպրոցի վերամուտին նշեցի, որ 1991-ին մեր երկիրը անկախութիւն հռչակեց՝ վերականգնելով իր պետականութիւնը՝ իբրեւ երրորդ հանրապետութիւն: Անկախութիւնը, վստահ եմ, մեծ ոգեւորութիւն պատճառած է նաեւ Եգիպտոսի գաղութին, որ Սփիւռքի ավանդական համայնքներէն մին ըլլալով տարիներ երազեր է անկախ հայրենիք ունենալ ու այցելել: Այսօր, ներկաներուն մեծամասնութիւնը այն երջանիկ սերունդն է, որ տեսած է հայրենիքին անկախացումը, որ բարե-

բախտաբար այս անգամ 33 տարի է որ կա՛յ եւ հակառակ ունեցած հողային կորուստներուն ու դժուարութիւններուն, վստահ եմ որ ժամանակի ընթացքին պիտի վերագտնէ ինքզինք եւ շարունակէ մնալ միշտ անկախ եւ կայուն:

Հետեւաբար, մաղթանքս է որ մեր եկեղեցւոյ եւ ազգային կառոյցներուն շուրջ բոլորուած պահենք այս համայնքը, մանաւանդ արժեւորենք այն մարգրիտը՝ որ մեր հայրենիքն է, Հայաստանի Հանրապետութիւնը, որ հերոսներ կը ծնի եւ այդ հերոսները կը պաշտպանեն մեր երկիրն ու մեր ժողովուրդը»:

Առաջնորդ սրբազան Հօր խօսքէն ետք շնորհակալական խօսքով ելոյթ ունեցաւ դեսպան Հրաչեայ Փոլատեան:

«Գերաշնորհ Տ. Աշոտ Եպիսկոպոս Մնացականեան,

Սիրելի հայրենակիցներ, քոյրեր եւ եղբայրներ,

Նախ, թոյլ տուէք իմ խորին երախտագիտութիւնը յայտնել, որ ժամանակ էք գտել եւ այսօր այստեղ էք՝ մեր հրաժեշտի առիթով: Շնորհակալ եմ, Սրբազան, որ կազմակերպեցիք այս հաւաքը: Անցան եւս երեք երկար ու ճիգ տարիներ, որոնք մենք անցկացրեցինք Եգիպտոսում՝ ծառայելով Հայաստանի Հանրապետութեանը:

Յատկանշական եւ խորհրդանշական է, որ մեր հանդիպումը տեղի է ունենում Սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Անկախութեան օրը: Թոյլ տուէք բոլորիդ շնորհաւորել այս հրաշալի տօնի կապակցութեամբ՝ նշելով, որ Անկախութիւնը բացարձակ արժէք է, որի համար դարեր շարունակ պայքարել են մեր նախնիները՝ անցնելով տարատեսակ փորձութիւնների եւ աղէտների միջով: Այն մենք կորցրել ենք պատմութեան ընթացքում մի քանի անգամ, սակայն Փիւնիկի նման վերակենդանանալով, կրկին յաղթանակներ ենք տօնել՝ բազմաթիւ մաքառումների արդիւնքում: Այն երբեք մեզ դիւրութեամբ չի տրուել: Այն պէտք է աչքի լոյսի պէս փայփայել: 21-րդ դարի մարտահրաւերները բազմաթիւ են, սակայն վստահ եմ, որ համահայկական համընդհանուր ու միասնական ուժերով մեզ յաջողուելու է պահպանել մեր երկիրն ու պետականութիւնը: Եր-





կու օրից մենք սպասում ենք ձեզ դեսպանութիւնում՝ միասին նշելու մեր Անկախութեան օրը:

Մեծ ցաւով պէտք է նշել, որ մեր պատմութեան դառնալի վայրիվերումների արդիւնքում այս ընթացքում ողբերգական եւ աղէտալի իրադարձութիւններ տեղի ունեցան Արցախում: Մենք անյաջողութիւնների մատնուեցինք: Համոզուած եմ, որ մեզ տրուած եւ մեր կողմից սերտուած դառը դասերի արդիւնքում, մեր յաջողութիւնները եւ յաղթանակները չեն ուշանայ: Ես չեմ ուզում այսօր եղածի համար փնտռել մեղաւորների, այլ փորձում եմ տեղի ունեցածը վերլուծել՝ ապագայում առնուազն նոյն սխալները չգործելու համար: Փառք մեր նահատակներին, որոնց երազանքները մի օր իրականութիւն են դառնալու:

Սիրելի եգիպտահայեր, դուք միշտ եղել էք Հայաստանի եւ Արցախի կողքին, դուք մշապէս աջակցել էք, ինչով կարողացել էք եւ հաւատացել, որ միահամուռ ուժերով միայն հնարաւոր կը լինի յաղթահարել մեր անյաջողութիւնները եւ գրանցել նոր յաղթանակներ: Որպէս Հայաստանի դեսպան կարող եմ ասել, որ մեր յաղթանակները առջեւում են, որովհետեւ այլ կերպ ուղղակի հնարաւոր չէ:

Վերջին երեք տարիների ընթացքում, որոնք անցկացրել ենք իմ տիկնոջ՝ Զարայի հետ միասին այստեղ, արել եմ առաւելագոյնը զարգացնելու հայ-եգիպտական յարաբերութիւնները: Այս գործում ձեր աւանդը նոյնպէս ահռելի է եւ անգնահատելի: Արձանագրուել են մի շարք ձեռքբե-

րումներ, որոնք վստահ եմ կ'ամրագրուեն եւ լաւ հիմք կը հանդիսանան Հայաստանի եւ Եգիպտոսի հետագայ յարաբերութիւնների զարգացման համար: Չեմ ցանկանում մէկ առ մէկ նշել Դեսպանութեան կողմից իրականացուած աշխատանքները, մանաւանդ, որ այս տարիների ընթացքում լրատուամիջոցների կողմից դրանք մանրամասն ներկայացուել են: Վստահաբար կան նաեւ թերութիւններ եւ բացթողումներ, սակայն դրանք մեր աշխատանքի վերջնական արդիւնքի վրայ էական ազդեցութիւն չեն ունեցել:

Վերջում ցանկանում եմ բոլորիդ մէկ անգամ եւս շնորհակալութիւն յայտնել մեզ ցուցաբերած աջակցութեան, ուշադրութեան, վստահութեան եւ պարզ մարդկային վերաբերմունքի համար:

Մի քանի օրից մենք մեկնում ենք Հայաստան: Հրաժեշտ չեմ տալիս, այլ ասում եմ ցտեսութիւն: Համարէք որ դուք մի լաւ ընկեր ունէք այնտեղ, որ պատրաստ է Հայրենիքում նոյնպէս ձեզ ծառայելու: Այցելէք հայրենիք, յատկապէս, որ այնտեղ յայտնուելը առաւել դիրացել է: Այնտեղ մենք սպասում ենք ձեզ: Մենք տանում ենք Եգիպտոսից ձեր սէրն ու ձեր սրտերի ջերմութիւնը: Մենք Ձեզ սիրում ենք: Մնաք բարով:

Շնորհակալութիւն»:

Աւարտին ներկաները ուրախութեամբ շրջապատեցին դեսպան Հրաչեայ Փոլատեանն ու իր ազնիւ տիկինը՝ Զարան, բարի օրեր մաղթեցին եւ յիշատակի պատկերներ առին անոնց հետ:





## ՄԱՐԴԸ ԻՆՔ ԿԸ ԿԵՐՏԷ ԻՐ ԱՊԱԳԱՆ

*Մարդը գեղեցիկ ու հզոր է  
իր վարքի գունագեղությամբ:*

**Կիկերոն**

Եգիպտոսի հիւրընկալ հողը, մեր պատմութեան դժնդակ օրերուն ապաստան տրամադրեց տնազուրկ ու հայրենազուրկ մեր մեծ հայրերուն: Ամէն օր տունդարձի գաղափարը մտքի մէջ ունենալով, երբեք չվարանեցան սեփական գիտելիքները, ջանքերը, աշխատասիրութիւնը նուիրաբերել իրենց ձեռք մեկնած երկրին: Ժրաջան մասնակցութիւն ունեցան Եգիպտոսի զարգացման եւ յառաջդիմութեան բոլոր գործերուն մէջ՝ ստանձնելով նաեւ առաջատարի պատասխանատւութիւնը: Կը բաւէ, որ յիշենք երկիրը ղեկավարող քանի մը նախարարներու, վարչապետներու... հայրերու լուսաւոր անունն ու գործերը, որ շարունակեցին նաեւ գալիք սերունդները: Մէկ անգամ չէ, որ հայ աշակերտը առաջնակարգ նուաճումներ ունեցած է իր գիտելիքներուն շնորհիւ, դպրոցներէն, համալսարաններէն ներս: Գիտութեան, կամ արհեստի ու արուեստի ասպարէզներուն մէջ ալ միշտ շողարձակած են հայկական անուններ:

Այսօր եւս մէկ անգամ Իվան Կարպիս Միսքեանը ապացուցեց, որ մենք կանք եւ հայը արթուն է, կը գործէ: Չնայած եգիպտահայ համայնքին քանակապէս նօսրացած ըլլալուն, երկրի թէ՛ գիտութեան, թէ՛ մշակութային շրջանակներէն ներս, բնաւ բացակայներ չենք արձանագրած: Սակայն եկեք համաձայնիք, որ մեր օրերուն յաճախ չենք լսեր երիտասարդի մը գիտութեան դոկտոր հռչակուիլը: Օրեր առաջ, Գահիրէի Համալսարանի փրոֆէսորական բարձր հեղինակութիւն վայելող յանձնախումբ մը, մեր համայնքի շնորհալի երիտասարդ Իվան Միսքեանը



նին ճարտարագիտութեան դոկտոր հռչակեց՝ **Նիւթերու մեքանիկա** մասնագիտութեան մէջ: Ան մշակած է մեթոտ մը, որ կը զանազանէ նիւթի մը պիտանելիութեան մակարդակը: Նիւթին, որով պիտի շինուի, կառուցուի որեւէ բան: Իվանը ճարտարագէտ է եւ համալսարանի գերազանց վկայեալ: Գերազանցութեամբ մագիստրոսի գիտական աստիճան առած հայ երիտասարդ մը, որ կը դասաւանդէ նաեւ համալսարանին մէջ: Դեռ դպրոցական աշակերտ եղած տարիներուն, Իվանը շատ անգամ արժանացած է Կրթական Նախարարութեան բարձր գնահատանքին, որպէս գերազանց աշակերտ: Կը սիրեր եւ գերազանց կերպով կը սորվէր բոլոր նիւթերը, սակայն միտքին պրպտումները զինք առաջնորդեցին գիտութեան թռիչքներով լի աշխարհը: Այն գիտութեան, որուն մէջ իր գերազանց գիտելիքներուն շնորհիւ, բարձր կը ճախրէ: Իվանի անունին շուրջ մշտապէս կը հնչէ «գերազանց» բառը: Կը թուի, թէ ես ալ շատ կրկնեցի, սակայն տեղին է եւ իրաւամբ: Իվանը նաեւ այն երիտասարդն է, որ տարիներ առաջ ընտրուեցաւ Եգիպտոսի նախկին եւ մերօրեայ հերոսներու հա-



## ՋԵՐՄ ՊԱՂՊԱՂԱԿԱՍԵՂԱՆ



Արեւի ոսկեշող վարսերը շառագունելով աստիճանաբար ծովը կը սուզուին: Քայլ առ քայլ օրը մութին գիրկը կ'ընկնէ: Օդը պիտի որ քիչ մը զովանայ, սակայն... Աղեքսանդրիահայութիւնը օրուան տաքէն կը փախչի դէպի հովասուն պարտէզները:

«Տիգրան Երկաթ» Հայ Մշակ. Միութեան գեղատեսիլ պարտէզը հովասուններէն կը սեպուի: Աղեքսանդրիոյ համայնքի անդամները յաճախ կու գան հոս զովանալու, իրար տեսնելու, զրուցելու եւ հաճելի ժամանակ անցնելու՝ մէկ գաւաթ սուրճի, կամ թէյի շուրջ: «Տիգրան Երկաթ» գեղադալար ու հիւրընկալ պարտէզը այսօր աւելի աշխոյժ է եւ մարդաշատ: Աշխուժութիւնը մեծ է, քանզի մեծ է երիտասարդութեան թիւը: Շատ են երիտասարդները, որովհետեւ հրաւիրուած են շրջանաւարտները: «Տիգրան Երկաթ»ը վաղեմի աւանդոյթ ունեցած է պատուել եւ շնորհաւորել համայնքի շրջանաւարտները: Գեղեցիկ յիշատակներ եւ շատ պատկերներ կան պատմութիւն դարձած ալպոմներուն եւ արդէն ոչ երիտասարդ մարդկանց յուշերուն մէջ: Համայնքի նօսրանալուն հետեւանքով, բազմաթիւ ձեռնակներու թիւին մոռցուեցաւ նաեւ «Շրջանաւարտներու Պաղպաղակասեղանը»:

«Տիգրան Երկաթ»ի այսօրուան վարչութիւնը կը ջանայ վերակենդանացնել սրահի վաղեմի գեղեցիկ աւանդոյթները: Եւ այսօր «Շրջանաւարտներու պաղպաղակասեղան» է: Հրաւիրուած են Աղեքսանդրիահայ համայնքի անցեալի եւ այս տարուան բոլոր շրջանաւարտները՝ դուրս

տորական թէզը պաշտպանածէն մինչեւ մանկապարտէզի շրջանաւարտը:

Ներկաներէն ոմանք կը մտաբերեն իրենց շրջանաւարտութիւնը, պաղպաղակասեղանը, եւ միտքը կը տանի շատ տարիներ ետ՝ երբ իրենք ալ երիտասարդ էին, շարժուն՝ իրենց թոռներուն պէս քիչիկ մը խենթուկ ու պայծառ, բարձր ու ո՛չ դիւրին թռիչքներու պատրաստ...

Պայծառ ու լուսաւոր են նաեւ այսօրուան շրջանաւարտները: Տակաւին չճաշակած կեանքի անհաճոյ երեւոյթները, դեռ չկրած բեռը կեանքին ու հոգը ընտանիքին, պայծառ ու արկածախնդիր, չարահի աչքերով կը դիտեն շուրջը եւ կը զարմանան հայրերու, մեծ հայրերու խոհուն հայեացքներէն: Վարդագոյն ու գեղեցիկ է աշխարհն ու կեանքը, ինչո՞ւ այդքան զգուշաւոր են աւագները: Տարիներ յետոյ, երբ իրենք նստած ըլլան մեծ հայրերուն տեղերը, անկասկած կը հասկնան անոնց մտքերն ու հայեացքները...

Հանդիսութիւնը բացուած յայտարարեց եւ շնոհաւորանքի ջերմ խօսք ըսաւ «Տիգրան Երկաթ» հայ Մշակ. Միութեան ատենապետուհի, Աւստրիոյ Ընդհանուր Հիւպատոս՝ տիկին Աստղիկ Ալեքսանեան-Փափազեանը: Ատենապետուհին սրտաբուխ կերպով եւ անկեղծօրէն շնորհաւորեց շրջանաւարտներուն ու կեանքի ծաղկազարդ ճանապարհ մաղթեց անոնց:

Սիրալիր ողջունեց եւ մէկ առ մէկ շնորհաւորեց շրջանաւարտները սրահի փոխատենապետուհի, Պողոսեան Ազգային Վարժարանի նախկին տնօրէնուհի՝ օրդ. Շուշան Կանիմեանը: Այս շրջա-



Նաև արտոններ են շատեր, եթե ոչ բոլորը, եղած են Պողոսեան Վարժարանի շրջանաւարտներ եւ աշակերտներ: Օրդ. Շուշանը երկար տարիներ դպրոցի շրջանաւարտներուն ջերմագին խօսքերով կեանքի կը ճանապարհէր: Այսօր իր սիրելի աշակերտները շրջանաւարտ են տարբեր օտար դպրոցներէ: Ան մաղթեց, որ պայծառ ու լուսաւոր ըլլայ շրջանաւարտներուն ապագան: Շրջանաւարտները հպարտութեամբ կը լսեն իրենց անունները եւ ուրախութեամբ կ'աճապարեն ստանալ շրջանաւարտի վկայականն ու նուէրը:

Այս ամբողջ իրարանցումին մէջ փոքրիկ Հրակ Կորտեան, որ շրջանաւարտ է մանկամտօրի, եւ այլեւս մանկապարտէզ պիտի յաճախէ, իր արեւահոր աչուկներով կը դիտէ շուրջը եւ զարմանքով հարցեր կու տայ մերթ մայրիկին, մերթ հայրիկին: Զարմանքէն աւելի մեծցան հոր աչքերը, երբ իրեն ալ հրաւիրեցին շնորհաւորանքի վկայական եւ նուէր ստանալու: Հրակը ստացաւ իր առաջին վկայականը,

որպէս ամենապզտիկ շրջանաւարտ:

Ապա ճոխ պաղպաղակասեղանի շուրջ սկսան փոխադարձ շնորհաւորանքները, սրտաբուխ մաղթանքները... Աղեքսանդրիոյ տաք երեկոն աւելի ջերմացաւ մարդոց ժպիտներէն, փոխադարձ սիրալիլ խօսքերէն, սիրառատ ու ջերմ մթնոլորտէն: Երանի հնչած բոլոր մաղթանքները իրականութիւն դառնան: Թո՛ղ իւրաքանչիւր շրջանաւարտ հասնի իր նախընտրած հանգրուանին եւ ուրախ ու երջանիկ կեանք ունենայ:

Իսկ տաք երեկոն գիշեր կը դառնայ, երկինքը՝ աստղազարդ ամպերու խաղ: Ամպերու փափուկ խաղին մէջ աստղերը կը ջանան պահպանել իրենց տեղը եւ ամենակարեւորը՝ լոյսը: Ո՞վ գիտէ մեր շրջանաւարտներէն ով ո՛ր աստղը կը նախընտրէ: Թո՛ղ բոլոր աստղերը պայծառ ու լուսաւոր մնան, անկախ իրենց մեծութենէն:

*Անժիկ Յակոբեան-Կանիմեան  
Աղեքսանդրիա*

→ շար. էջ 4 էն

## ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ 93ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Նշանաւոր Գարնըկի Հոլին մէջ անոնց կազմակերպումը ամբողջութեամբ տիկին Վերա Սեդրակեանի մտայղացումով եւ ջանքերով իրականացած են:

Այս տեսերիզը վերջ կը գտնէ Սեդրակեան ամոլին ուղղուած բարօրութեան եւ երջանկութեան սրտաբուխ մաղթանքներով:

Երկու տեսերիզներուն մէջ ալ կը նշուի,

թէ ՀԲԸՄԻ նախկին նախագահ Պերճ Սեդրակեանի գլխաւոր ներդրումներէն մէկը կամուրջ դառնալն էր Սփիւռքի եւ Հայաստանի միջեւ, այդ ձեւով նուազագոյնի իջեցնելով գոյութիւն ունեցող բացը:

Տեսերիզներուն կարելի է ծանօթանալ ՀԲԸՄԻ կայքէջին վրայ:



## ՀՈԿՏԵՄԲԵՐԵԱՆ ՊԱՆԾԱԼԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Պատերազմը դժուար է բուլորին համար՝ երկրին, ժողովուրդին, մանաւանդ բանակին համար, որուն զինուորները «մահ իմացեալ»ին դէմ յանդիման են ամէն վայրկեան. քիչերն են, որոնց կը տրուի բախտը տուն վերադառնալու, բայց անոնք եւս իրենց հետ կը տանին հոգիի այնպիսի խոցեր, որոնք կէս դար ետք իսկ չեն մոռցուիր:

Յաղթանակը կ'օգնէ մոռնալ հոգիի խոցերն ու մեղմել կորուստները:

Կէս դար եւ մէկ տարի անցեր է Հոկտեմբերեան յաղթանակէն: Որպէս մէկ մասնիկը Եգիպտոսի ժողովուրդին, մենք եւս կը մասնակցինք Հոկտեմբերեան տօնակատարութիւններուն, ո՛չ միայն անոր նուիրուած պասքէթ պոլի մրցաշարքով, այլ մշակութային եւ գեղարուեստական ձեռնարկով մը նաեւ:

23 Հոկտեմբերի երեկոյեան, Սաթենիկ Չագըր սրահէն ներս տեղի ունեցաւ բացումը «Մշակութային Սալոն»ին, մեծ երգիծանկարիչ Ալ. Սարուխանի Հոկտեմբերեան պատերազմին նուիրուած քանի մը տասնեակ երգիծանկարներու ցուցադրութեամբ:

Տեղի ունեցաւ նաեւ սեմինար մը, նուիրուած Հոկտեմբերեան յաղթանակի հերոսներուն, որուն կը մասնակցէին հրամանատարներ Մուհի Նուհ եւ Հաթէմ Ապտէլ Լաթիֆ: Երկու հրամանատարներն ալ մասնակից եղած են պատերազմին եւ 6 Հոկտեմբերի յաղթանակը կերտած:

Սեմինարը կը վարէր գրագէտ-մամուլի



աշխատակից Մոհամէտ Նաուար: Ներկայ էին նաեւ զոհուած հերոս Իպրահիմ Բիֆա'ի ընտանիքին անդամները:

Թեմիս Բարեջան Առաջնորդ Տ. Աշոտ Եպս. Մնացականեան ներկայ եղաւ այս սեմինարին, որուն ներկայ էին բազմաթիւ պատասխանատու անձեր, ինչպէս օրինակ տիկին Սիլվա Ներետեան-Բլատեան, Ալ. Սարուխանի թոռնուհին, տիկին Միրվէթ Ալսայէտ, նախկին տնօրէնուհին Երիտասարդութեան եւ Սփօրի նախարարութեան, տոքթ. Արմէն Մազլումեան եւ ուրիշներ:

Երեկոն սկսաւ Եգիպտոսի քայլերգով, որմէ ետք ՀԲԸՄԻ Գահիրէի մասնաճիւղի ատենապետ դոկտ. Ճորճ Սիմոնեան բացումը կատարեց բարի գալուստի խօսքով:

Ցուցադրուեցաւ տեսերիզ մը եգիպտական խորհրդարանին մէջ, այն օրերու





Նախագահ Անուար Սատաթի կողմէ Հոկտեմբերեան յաղթանակին առիթով խօսուած:

Նախ խօսք առաւ հրամանատար Հաթէմ Ապտէլ Լաթիֆ, որ երգիծանքով համեմուած իր պատումով գերեց ներկաները, հակառակ դէպքերուն ցաւալի եւ ծանր ըլլալուն: Պատմեց թէ ինչպէս իր առջինեկին ծնունդէն անմիջապէս առաջ կը գտնուէր պատերազմի թէժ կէտին վրայ, ծանր պայմաններու մէջ: Առաջին զաւկի ծնունդին «սա՛տիցի ըլլալուս, նեղուեցայ որ առջինեկս մանչ չէր», բայց յուշը իր ծանր կացութեան եւ գալիք զաւկին ուրախութիւնը օգնէր են մոռնալ աղջիկ ունենալու «ցաւը»:

-Հիմա երկու դուստրերս երկու աչքերուս լոյսն են ...

Հրամանատար Հաթէմ Ապտէլ Լաթիֆ մեծ խանդավառութեամբ պատմեց այն «սեւ շաբաթ»ին մասին, երբ Թոր օդակայանը – ուր վարչապետուհի Կուտա Մայիր պիտի այցելէր – եգիպտական բանակը հիմնայատակ կործանէր է, 40 վայրկեանի մէջ, սպաննելով 430 զինուոր եւ մէկ գերի վերցնելով:

Շատ յուզիչ է մահացած զինուորի հօր աղաչանքը հրամանատարին՝ «Տղաս երեւաց երազիս եւ խնդրեց որ զինք հանենք այդ փոսէն եւ մեր գիւղը թաղենք»:

«Գացինք, փնտռեցինք, բայց շրջապատը այնքան փոխուած էր, որ ես իսկ, որ թաղեր էի Սամին, տեղը չգտայ» կ'ըսէ:

Երկրորդ անգամ սակայն Սամիի հայրը կրկին կը խնդրէ փնտռել տղուն աճիւնները, այս անգամ ճշգրիտ տեղը նկարա-

գրելով, ըստ երազին: Երկրորդ փորձին կը գտնուին աճիւնները: Հայրը պատիւով կը թաղէ իր զոհուած մանչը:

Հրամանատար Հաթէմ իր խօսքը աւարտեց ըսելով.

-Գիտէ՞ք թէ որո՞նք են իսկական հերոսները այս յաղթանակին... Նախ՝ եգիպտացի կին-մայրը, յետոյ Եգիպտոսի ժողովուրդը եւ ի վերջոյ զինուորներուն կամքը, զինուորներ, որոնք 2.90 կինէ ամսականով կ'ապրէին ու կը կռուէին: Մեր ունեցած զինամթերքը՝ հին ռուսական զէնքեր, ոչինչ էին բաղդատելով թշնամիին արդիական զէնքերուն: Եգիպտոսը ազատագրուեցաւ իր մայրերուն օրհնութեամբ եւ զինուորներուն քաջութեամբ:

Հրամանատար Մուհյի Նուհ եղած է նախատիպարը Մուհյի անունով հերոսին, բեմադրիչ Շըրիֆ Արաֆայի «Անցքը» (Ալ Մամար) ֆիլմին մէջ, որ այն օրերուն պատուիրուած էր Զինուած Ոյժերու Բարոյական Հարցերու գրասենեակին կողմէ (الشؤون المعنية للقوات المسلحة)

Կը յիշէ թէ ինչպէս հանդիպեր է բանակին ճամբուն վրայ կեցած, ճերմակ պարեգօտով մարդու մը, եւ վախնալով անոր լրտես ըլլալէն, հարցուփորձ ըրեր է.

-Ես ձեր անցած գիւղին պէյերէն մէկն եմ. եկայ, որ ձեզի հետ կռուելու երթամ, կ'ըսէ գիւղացին:

Իր գունդին բոլոր զինուորներուն անունները յիսուն տարի ետք մէկիկ-մէկիկ յիշող հրամանատարը գուրգուրանքով կը խօսի անոնց մասին. իր պատումները անհատնում են.

-Կրնամ քանի մը օր անընդմիջաբար



խօսիլ ու պատմել,- կ'ըսէ:

Ի՞նչ է, կը կարծէք, պատերազմի գացող զինուորին հոգեվիճակը:

-Չէինք ուզեր ծանօթի հանդիպիլ, որովհետեւ անոնք մեր ձգած կեանքը կը յիշեցնէին մեզի, իսկ մենք կ'ուզէինք մոռնալ, որովհետեւ որեւէ պահու կրնար մեր կեանքին թելը փրթիլ, կտրուիլ:

Իսկապէս հպարտութիւն էր լսել այս տարեց հրամանատարներուն խօսքը, զգալ անոնց հպարտութիւնը եւ սէրը իրենց հայրենիքին, իրենց զինուորներուն հանդէպ:

Խօսքերու աւարտէն ետք, ներկաները հետաքրքրական հարցեր տուին երկու հրամանատարներուն, որոնցմէ մէկը կը վերաբերէր ստեղծագործութեան դերին պատերազմի յաղթանակին մէջ, եւ թէ բարձրաստիճան զինուորականները կ'անսա՞ն իրենց ստորադասներու կարծիքին եւ գաղափարներուն:

Երկու հրամանատարները պարզեւատրուեցան յատուկ պատրաստուած արծաթեայ ափսէներով, ՀԲԸՄի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ տորթ. Գէորգ Երզնկացեանի եւ ՀԲԸՄի Գահիրէի մասնաճիւղի ատենապետ դոկտ. Ճորճ Սիմոնեանի կողմէ:

Սեմինարէն ետք ներկաները մանրամասնօրէն դիտեցին Ալ. Սարուխանի Հոկտեմբերեան պատերազմին նուիրուած երգիծանկարները, որոնք տրամադրուած էին Սարուխանի թոռնուհիին՝ տիկին Սիլվա Ներեւեան-Բլատեանի կողմէ (տիկին Բլատեան իր մեծ հօր նկարները պահպանողն ու տնօրինողն է՝ curator-ը), եւ որոնց մասին բացատրութիւններ կու տար Ապտալլա Սաուի (ցուցահանդէսը դասաւորողը):

Փոքրիկ հիւրասիրութեամբ մը երեկոն իր աւարտին հասաւ:

→ շար. էջ 8 էն

## ՄԱՐԴԸ ԻՆՔ ԿԸ ԿԵՐՏԷ ԻՐ ԱՊԱԳԱՆ

մատչելի պատական մեծ ու պատուաւոր հաւաքին մասնակից, որպէս Գահիրէի Համալսարանի գերազանց եւ շնորհալի շրջանաւարտ: Կը հասկնանք անշուշտ, որ Գահիրէի Համալսարանը ունեցած է միլիոնաւոր ուսանողներ ու շրջանաւարտներ, սակայն ընտրուեցաւ Իվան Միսքճեանը, մե՛ր Իվանը: Ամբողջ համալսարանէն՝ միակը: Եւ տառացիօրէն օրեր առաջ հռչակուեցաւ **Ճարտարագիտութեան Դոկտոր**: Հարկա՛ւ հպարտանալու առիթը ունինք եւ կը հպարտանանք:

Կը շնորհաւորենք Իվան Միսքճեանն ու իր ծնողները, ազնիւ զաւակ մեծցնելու եւ գիտութեան բարձունքները հասցնելու առթիւ, անոր բոլոր ուսուցիչները, հարազատները եւ ամբողջ հայ համայնքը: Այո՛, համայնքը նաեւ, քանզի այսօր յաճախ ականջալուր չենք ըլլար մեր ազգային ինքնութիւնը շոյող նմանատիպ լուրերու: Ամբողջ աշխարհի անտարբերութեան

թմբիրին մէջ սուզուած են նաեւ մե՛ր երիտասարդները: Ուսանելու, նորին, առաւել բարձրին ձգտելու տենչն ու երազը մթազնած են կարծես: Նախորդ սերունդները բազմաթիւ բժիշկներ, բարձր ճարտարագէտներ, տարբեր գիտութիւններու մէջ մագիստրոսներ ու դոկտորներ ունին եւ ունեցած են, սակայն նոր սերունդը...

Այս առիթով եւս կը շնորհաւորենք Իվան Միսքճեանը եւ կը յուսանք, որ ան նոր ճամբայ կը բանայ իր տարեկիցներուն եւ օրինակ կ'ըլլայ գոնէ երկմտողներուն: Նպատակս Իվանին հերոսացնելը չէ, այլ երիտասարդներուն խանդավառելը, վստահ ըլլալով, որ շատ արժանաւորներ կան, որոնք կրնան հետեւիլ Իվանի օրինակին: Լաւատես ըլլանք եւ ակնկալենք, որ հայու ծինը կը յարատեւէ մեր երիտասարդներուն մէջ եւ երբե՛ք չի մթազնիր:

**Անժիկ Յակոբեան-Կանխմեան**



## ՀԲԸՄԻ ԳԱՀԻՐԷԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԻ ԶԵԿՈՒՑԱԲԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

29 Հոկտեմբեր 2024-ի երեկոյեան, Ս. Չազըր սրահէն ներս տեղի ունեցաւ ՀԲԸՄԻ տարեկան զեկուցաբեր ընդհանուր ժողովը, որուն մասնակցեցան ՀԲԸՄԻ Գահիրէի Տեղական Մասնաճիւղի ատենապետ դոկտ. Ճորճ Սիմոնեան, Մասնաճիւղի վարչութեան անդամները, օժանդակ անդամներն ու Միութեանս անդամներէն կարգ մը անհատներ:

Ատենապետ դոկտ. Ճորճ Սիմոնեանի բացման եւ բարի գալուստի խօսքէն ետք Վարչութեան փոխ ատենապետը՝ պարոն Մարտիկ Պալաեան ընթերցեց անցնող տարեշրջանի՝ 2023-2024-ի բարոյական տեղեկագիրը:

Պարոն Պալաեան անդրադարձաւ 2023-2024 տարուան գործունէութեան եւ կատարուած ծախսերուն, զեկոյցը բաժնելով երկու մասի:

Ա. Կալուածական Հարցեր, Զամալէքի վիլլային մասնաշէնքին կացութիւնն ու վիլլային կահաւորեալ վարձակալութեան պայմանագրութիւնը ՀՀ դեսպանութեան հետ:

Բ. Մշակութային յատկացումներ, որոնց մաս կը կազմեն «Արեգ» արաբերէն պարբերաբերթը, «Տեղեկատու» պարբերաբերթը, աշակերտութեան եւ ուսանողներու գերազանցութեան մրցանակները, «Ծիածան» մանկա-պատանեկան երգչախումբը, գիրքերու հրատարակութիւններն ու գնուած գիրքերը, կայքէջի նորոգումը, եւ ՀՀՀի (Հայկական Հա-




մացանցային Համալսարան) յատկացումները:

Այս ցանկին մաս կը կազմեն նաեւ հայ ուսուցիչներու գնահատանքի կենսաթոշակները, կրթական օժանդակութիւնը, ընկերային օժանդակութիւնը, առողջապահական Չազըր ծրագիրը եւ այլ յատկացումներ:

Բարոյական տեղեկագրին ընթերցումէն ետք պարոն Գէորգ Աւանեան ներկայացուց Միութեան տնտեսական տեղեկագիրը՝ նախ եկամուտի աղբիւրները՝ Սաթենիկ Չազըր Ֆոնտ եւ Միութեան միջոցները, ապա եղած ծախսերը անցնող տարուան ընթացքին եւ գալիք տարուան նախահաշիւը:

Ներկաները ուշադրութեամբ հետեւելէ ետք, կարգ մը հարցումներ ուղղեցին յարգելի զեկուցաբերներուն:


Ժողովը փակուեցաւ մտերմիկ հիւրասիրութեան մը շուրջ:





## «ԱՊԱԳԱՅ» ՍԵՄԻՆԱՐՆԵՐՈՒՆ ԵՐԿՐՈՐԴԸ

Եգիպտոսի ՀԲԸՄԻ Երիտասարդ Մասնագետներու խմբակը հպարտութեամբ կը յայտնէ, թէ ակարտեր է «Ապագայ» սեմինարներու շարքի երկրորդ փուլը: Երեք շաբաթներու ընթացքին ընդամենը վեց գրաւիչ նիստերով 11 ոգեւորուած մասնակիցներ հնարաւորութիւն ունեցան սուզուելու գործիքներու ստեղծագործ խմբագրման աշխարհին մէջ եւ սորվելու ինչպէ՛ս «կախարդանք» կատարել Photoshop-ի միջոցով: Դասընթացքը կը կրէր The Art of Editing and Photo-manipulation With Photoshop խորագիրը:



Կը շնորհաւորենք Երիտասարդ Մասնագետները, յաջողութեանը համար իրենց ծրագրին երկրորդ բաժնին, որ նուիրուած է մեր պատանիներուն, զիրենք ճարտարարուեստի նոր գիտելիքներով զինելու համար:

Ահա թէ ինչ կ'ըսէ դասընթացքները վարող տիկին Ասիէ Ճիզմէճեան-Կապեան այս մասին.

«Photoshop-ը դիւրութեամբ ուսուցանող ծրագրաշար չէ: Երբ կը ծրագրէի այս սեմինարին բովանդակութիւնը, մտահոգուած էի, որովհետեւ երեք շաբաթներու ընթացքին, միայն 12 ժամը բաւարար պիտի չըլլար այս բարդ ծրագիրը սորվեցնելու համար: Բայց առաջին օրն իսկ տեսնելով մասնակիցներուն խանդավառութիւնն ու

սորվելու պատրաստակամութիւնը, վստահ եղայ որ անոնք երեք շաբաթներու ընթացքին պիտի կարենան սորվիլ այս բարդ ծրագիրը»:

Դասընթացքին ծրագիրը այնպէս էր, որ իւրաքանչիւր շաբաթ նոր բան մը սորվէին, եւ իրենց մարտահրաւեր նետող պարտականութիւնները կատարէին, օգտագործելով իրենց սորվածները:

Անհաւատալի էր տեսնել պատանիներուն յառաջընթացը դասընթացքին իւրաքանչիւր պահուն, ուրախալի էր նոյնիսկ տեսնել, թէ ինչպէս մասնակիցները իրենք իրենց սահմանները կը փորձէին լայնցնել: Բոլոր մասնակիցները իրարու կ'օգնէին մանաւանդ տրուած պարտականութիւնները կատարելու համար, ինչ որ ջերմ եւ ստեղծագործական մթնոլորտով կը յագեցնէր հանդիպումները:

Ուրիշ երեւոյթ մը եւս, որ մեծ ուրախութիւն կը պատճառէր ինծի՝ մասնակիցներուն ինծի դրկած եւ նամակները կամ հաղորդագրութիւններն էին, որոնցմով անոնք կը զեկուցէին իրենց յառաջխաղացը:

Յոյսով եմ, որ իւրաքանչիւր մասնակից կը պահէ նուիրուածութեան այդ մակարդակը: Յորդորս է՝ շարունակել կիրարկել իրենց սորվածը եւ ուղիներ գտնել ստեղծագործ մնալու համար: շաբ. էջ 18 →





## ԱՍՏՈՒԱԾՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՐԴՈՑ ՄԱՍԻՆ

Որքան հպարտալի երեւոյթ է տեսնել գաղութիս երիտասարդներէն մէկուն աշխատանքը գնահատուած ոչ միայն օտար շրջապատին կողմէ, այլ նաեւ օտար երկիրներէ եկած մարդոց կողմէ:

Ամբողջ պատմութիւնը հէքեաթի բնոյթ ունի:

Վերջերս եգիպտոս այցելող Հնդկաստանէն եկած խումբ մը զբօսաշրջիկներ կը փափաքին իրենց Լուքսոր-Ասուան նաւապտոյտի ընթացքին ուղեցոյց մը ունենալ, որ կարենայ հնագիտական վայրերուն կրօնական բնոյթը բացատրել իրենց:

Կը հրաւիրեն երիտասարդ եգիպտաբան դոկտ. Արթօ Պըլըքտանեանը: Եւ այնքան գոհ կը մնան, որ իրենց վերադարձէն քանի մը ամիս ետք կը հրաւիրեն դոկտ. Պըլըքտանեանը Պանկալոր (Հնդկաստան), որպէսզի խումբին մաս կազմող եւ մեծ աշխատանոց ունեցող ոսկերիչի մը եգիպտական ներշնչումով իրագործած ոսկեղէնի նոր հաւաքածոյի ներկայացման մասնակից դառնայ, հին եգիպտական զարդեղէնին մասին երկու դասախօսութիւններով:

Այս դէպքէն քանի մը ամիս ետք կրկին կը տեսնենք գնահատանքի ժեսթ մը. Չորեքշաբթի, 30 Հոկտեմբերի երեկոյեան, Հելիոպոլսոյ Յոյն Մելքիթ Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ (Քորպա շրջան) դոկտ. Պըլըքտանեան շատ հետաքրքրական դասախօսութիւն մը ներկայացուց՝ «Ներածութիւն մը հին եգիպտական կրօնքին» խորագրով (An introduction to ancient egyptian religion):

Հրաւերը եկած էր եկեղեցւոյ հովիւ Փէր Րաֆիք Կրէշի կողմէ, որ բարի գալուստ մաղթեց բոլորին, մասնաւորաբար ներկայ հայերուն, ապա ներկայացուց դոկտ. Պըլըքտանեանի հակիրճ կենսագրականը. եւ խօսքը փակեց ըսելով.

«Եթէ մանրամասնօրէն ներկայացնեմ զինք, իրմէ աւելի երկար խօսելու պէտք ըլլայ թերեւս ... Բոլոր հին կրօնքները մեզ



կը հասցնեն Յիսուս Քրիստոսի գալուստեան»:

Դոկտ. Պըլըքտանեան հասկնալիօրէն ներկայացուց կրօնք մը, որ խորքին մէջ բաւական բարդ է, միաժամանակ խիստ մարդկային, որովհետեւ աստուածները ունեցեր են մարդկային բնոյթ, նոյնիսկ իրենց ծնունդով եւ մահով:

Թէ ինչո՞ւ բազմաթիւ աստուածներ ունեցեր է հին եգիպտոսը.

«Կարգ մը աստուածներ կարգ մը վայրերու համար աւելի կարելոր եղեր են, քան մնացեալները»:

Եգիպտական կրօնքը աւելի օրկանական (organic) կրօնք եղած է, քան՝ վարդապետական (dogmatic), չէ ունեցած իր «սուրբ» գիրքը, որուն մէջ ամբողջ հաւատալիքները գրուած ըլլան, կրօնք մը, որ ամբողջութեամբ ի յայտ չէ եկած, այլ ժամանակի ընթացքին զարգացեր է, եւ երբ առաջին գրութիւնները արձանագրուեր են, կրօնքը արդէն բաւական ժամանակէ ի վեր գոյութիւն ունեցած էր: Դարերու ընթացքին շարունակուեր է կրօնքին զարգացումը:

Մարդիկ սիրած են եւ պաշտած իրենց աստուածները, թէւ երբեմն այդ աստուածները իրարու հակառակ հաւատալիքներ ներկայացուցեր են:

Կարելորագոյն աստուածը արեւի աստուածն է, որ ներկայացուեր է բազէի

կերպարով, գլխուն՝ արեւի սկաւառակը:

Հին Եգիպտոսի համար արեւի ծագումը ծնունդ է, իսկ մայրամուտը՝ մահ. արեւը կը ծնի, կը մեծնայ, կէսօրին երիտասարդութեան հասնելու համար, ապա իրիկունը ծերանալով կը մահանայ, յաջորդ առաւօտ կրկին ծնելու համար: Այստեղ է առաջին յատկանշական երեւոյթը՝ ծնունդի եւ մահուան կապը: Ասիկա ժողովուրդին համար կը կապուի Նեղոսի յորդումին, որուն պատճառով հողերը ամբողջ «կ'ընկղմին, կը մեռնին», սակայն ջուրերը քաշուելէ ետք հողերը կը դառնան պարարտ եւ բարեբեր: Աւետարանին մէջ եւս կը գտնենք ցորենի հատիկին նշանաւոր օրինակը.

«Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հասն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ» (Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ ցորենի հատիկը հողին մէջ իյնալով չմեռնի, ինք կ'ապրի միայն, իսկ եթէ մեռնի, բազում արդիւնք կու տայ: Յովհաննու Աւետարան 12:4):

Արեւի աստուածը, եգիպտական կրօնքին մէջ, ստեղծիչներէն մէկն է եւ ստեղծողը Հելիոպոլսական (Heliopolitan) ստեղծագործութեան առասպելին. սակայն ինք եւս կը հպատակի իր ստեղծած կանոններուն՝ կը ծնի, կը մեռնի ջուրերուն տակ, յաջորդ առաւօտ կրկին ծնելու համար:

Արեւի աստուածը տարբեր խորհրդանշաններով ներկայացուած կը գտնենք հին Եգիպտոսի մէջ:

Իսկ թէ ինչո՞ւ նոյն գաղափարը տարբեր ձեւերով եւ պատումներով ներկայացուած է. պարզապէս ժողովուրդին դիրացնելու համար ըմբռնումը նիւթի մը, որ կրնայ բաւական բարդ ըլլալ:

Atum բառը, որ արեւի աստուածին անունն է, հիբրոկլիֆ երկու բաղաձայն նշանագրերով ներկայացուած է երկու, մէկը T կը թարգմանուի, երկրորդը՝ TM. ու եթէ այս երկու նշանագրերը կողք կողքի դնենք, թերեւս պիտի հնչենք «թամ»: Այս բառը արաբերէնով կը նշանակէ «եղա՛ծ է, կատարեալ է»: Պէտք է նշել սակայն, որ նոյն այս բառը, հին եգիպտերէնին մէջ



կրնայ նաեւ ճի՛շդ հակառակը նշանակել՝ ժխտականը, չ-ի իմաստով: Ասիկա անշուշտ յարակարծիք (paradox) մը կը ստեղծէ, միաժամանակ շեշտելով ամբողջ՝ ժխտականն ու դրականը միատեղ ըլլալու գաղափարը: Ասիկա զուգադիպութի՞ն է թէ ...

Իսկ ջրաշուշանը (lotus), որ եգիպտական գրեթէ բոլոր յուշարձաններուն մէջ մեծ դեր ունի, իր կազմուածքով իսկ կը խորհրդանշէ արեւի աստուածը՝ սիրտը դեղին, արեւին պէս, բերթերը՝ կապոյտ, երկնքի պէս, ինք ալ ջուրի մէջ, հոն ուր կը ծնի եւ կը մեռնի արեւի աստուածը:

Բաւական ետքն է, որ ի յայտ կու գան երկնքի եւ հովի աստուածները: Իսկ մահուան եւ վարի աշխարհին աստուածները՝ Օզիրիսն ու Իզիսը, շատ աւելի ետք է որ կը յայտնուին:

Օզիրիսի եւ Իզիսի միացումէն կը ծնի Սէթը, քաոսի եւ չարի աստուածը, որ շատ էական է, պահելու համար հաւասարակշռութիւնը, որովհետեւ եթէ չըլլար քաոսը, պիտի չըլլար կեանքը, ինչպէս կը գտնենք նաեւ Աստուածշունչին ամենէն սկիզբը.

«Երկիրը անձեւ ու պարապ էր եւ անդունդին վրայ խաւար կար...»:

Ապա յարգելի դասախօսը բացատրեց, թէ ուրկէ եկեր է զմոսելու սովորութիւնը:

Օզիրիսը առաջին աստուածն է որ կը մեռնի, եւ առաջին մարմինը, որ կը զմոսուի: Որմնանկարին մէջ կը տեսնենք Օզիրիսի զմոսուած մարմինը, երկու կողմը հսկայ թռչուններ, որոնք իրենց թեւ-




րուն թափահարումով կը վերադարձնեն հոգին ... Ժողովուրդը կը հաւատար, որ զմոտելէ ետք երբ հոգին վերադառնայ, մարմինը պատրաստ պիտի գտնէ զինք ընդունելու, որպէսզի յափտենական կեանքին մէջ չփճանայ: Ճիշդ է որ բարձր դասակարգն էր միայն զմոտմի կարողութիւն ունեցողը, սական աղքատներուն համար, որոնք պարզապէս հողին մէջ կը թաղէին մեռնողը, բնութիւնն էր՝ Եգիպտոսի չոր կլիման, որ մարմինը փճացումէ գերծ կը պահէր:

Մայրերուն բազմաթիւ աստուածութիւններ տրուած են, ինչպէս օրինակ Իզիսի եւ Հորըսի շատ նշանաւոր արձանը, որ յանգիտութիւններ ունի Աստուածամօր նկարներուն հետ, կամ իր զաւակը պաշտպանող առիծագլուխ Սէխմէթը:

Հետաքրքրական է նաեւ Ասուանի Խնում աստուածը, որ բրուտի անիւին վրայ կառուվ մարդ կը «շինէ»: Իսկ Մեմֆիսի մէջ Բթահն է ստեղծագործութեան աստուածը, երբ կը մտածէ, կը խօսի, կը հնչէ, եւ բառին ուժով մտածումը գոյութիւն կ'առնէ: Կրկին՝ զուգադիպութիւն, թէ՞ ...

Իսկ թէ ի՞նչ էր պատճառը, որ դամբարաններուն պատերը ամբողջ հիրոկլիֆ գրութիւններով ծածկուած են. Հին Եգիպտոսի մէջ կա՞ր գիտակցութիւնը իրենց կեանքը արխիւի կամ պատմութեան վերածելու:

Հին Եգիպտացիները կը հաւատային գիրի ոյժին, կը հաւատային թէ ի՞նչ որ



գրուի՝ քարին վրայ փորագրուած թէ նկարուած, կրնայ իրականութիւն դառնալ: Այդ է պատճառը, որ ոչ մէկ ժխտական պատում կարելի է գտնել այդ գրութիւններուն մէջ:

Դասախօսութեան աւարտին դուկտ. Պըրըքտանեան յոյս յայտնեց, որ կրցած էր ներկաներուն հակիրճ գաղափար մը տալ այս լայնածաւալ եւ բարդ նիւթին շուրջ:

Շատ հետաքրքրական էր նկատել, որ ներկաներէն շատ-շատեր նօթեր կ'առնէին իրենց տետրերուն մէջ, բան մը իրապէ՛ս հազուադէպ դարձեր է վերջերս:

Մէկ ու կէս ժամուան աւարտին, ներկաները հարցումներով ողողեցին հմուտ դասախօսը, եւ յայտնեցին իրենց հիացումն ու ուրախութիւնը այս հետաքրքրական դասախօսութեան համար:

→ շար. էջ 15 էն

## «ԱՊԱԳԱՅ» ՍԵՄԻՆԱՐՆԵՐՈՒՆ ԵՐԿՐՈՐԴԸ

Անհամբեր եմ տեսնելու, թէ մասնակիցները ի՞նչ աշխատանքներ պիտի ներկայացնեն այն ցուցադրութեան, որ ծրագրած ենք կազմակերպել իրենց համար:

Խորապէս շնորհակալութիւն կը յայտնեմ բոլոր ծնողներուն, որոնք ամէն շաբաթ ժամանակ կը յատկացնէին իրենց զաւակները մեզի բերելու:

Յատուկ շնորհակալութիւն Նաթալի Կոտոլոշեանին, որ կամաւոր կերպով օգնեց ինձի նիստերուն ընթացքին եւ խոստացաւ մի՛շտ ներկայ ըլլալ, աջակցելու համար բոլորին»:

Սեմինարը տեղի ունեցաւ ՀԲԸՄի Ս. Չագրը սրահէն ներս (Հելիոպոլիս), Ուրբաթ եւ Շաբաթ օրերը, 13-27 Սեպտեմբերին:



## ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Գեղեցիկ հոգին գեղեցիկ մարմնի մէջ

Ցեղասպանութենէ մազապուրծ հայ գաղթականները օտար երկիրներու մէջ հաստատուելէ առաջ, հիմնեցին իրենց եկեղեցին, վարժարանները, մշակութային ակումբներն ու միութիւնները: Քանզի մայր ու մանուկ կոտորուած ազգի մը, օդի պէս անհրաժեշտ էր պահպանել ինքնութիւնը՝ հայ մնալ եւ հայ մեծցնել եղած եւ գալիք սերունդը: Հայրենասէր անձինք խորհեցան, որ հայապահպանումի կարելոր մաս կը կազմէ նաեւ մարմնակրթութիւնը եւ հիմնեցին մարմնակրթական միութիւններ: Հայ մանուկը իրապէս հայ կրթելու համար՝ հաւատք, գիտելիք, ազգի պատմութիւն ու մշակոյթ գիտնալէն զատ, պէտք է կրթուի նաեւ ֆիզիքապէս: Պէտք է կրթել նաեւ մարմինը, կամքը, յաղթելու եւ պայքարելու ձգտումը: Այսօրուան համատարած անտարբերութեան մէջ, զարմանալի եւ միեւնոյն ատեն ուսանելի է ազգի ապագան խորհող եւ ապահովող մարդոց ազգային մտածելակերպը: Մարդիկ, որոնք իրենց անձնական տունները կառուցելէ առաջ, մտածեր են ազգային վարժարան ու եկեղեցի, մշակութային ու մարմնակրթական միութիւններ ստեղծել. եւ ո՛չ միայն մտածեր են, կամ նորոգեր, այլ հիմներ ու կառուցեր են, գուցէ առանց բազմաշերտ ու բազմաթիւ ժողովներ գումարելու:

Մասնաւոր շնորհակալութիւն եւ խոնարհում Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Միութեան հիմնադիրներուն, բարերարներուն, վարչականներուն եւ բոլոր նախկին ու ներկայ անդամներուն, որոնք անսակարկ կերպով նուիրաբերեցին եւ կը նուիրաբերեն իրենց կեանքը յօգուտ Միութեան գոյատեւման եւ զարգացման: Երբե՛ք եւ ոչ ո՛ք կրնայ մոռնալ **Հայկ Ճիզմէճեան** անունը, որ 1923 թուականին Աղեքսանդրիոյ մէջ հիմը դրած է Եգիպտոսի առաջին Հ.Մ.Ը.Միութեան մասնաճիւղին: Արամ Մանուկեան, Նազարէթ Զամպաբեան, Լեւոն Եղուշեան... Մարդիկ, որոնք

չունենալով սեփական մարզարան, չէին զլանար վարձուած տարբեր մարզարաններու, սրահներու մէջ մարզել պասքէթպոլի, թէնիսի, փինկփոնկի խումբերը եւ պատուաբեր արդիւնքներ գրանցել:

Որպէսզի մարզումներէն ետ չմնան աւելի պզտիկները, նախաձեռնուեցաւ Սկաուտական շարժումը, Գայլիկները՝ իրենց Աքելա եւ Փակիրա պետերով: Դանիէլ Ղազարեան, Յովհաննէս Չորլեան, Ժիրայր Ղազարեան... Աղեքսանդրիոյ 100-ամեայ Հ.Մ.Ը.Մ.ին այսօրուան մարզիկները երախտագիտութեամբ կը մտաբերեն այս անունները: Անուններ, անուններ... Իւրաքանչիւրը մի մեծ գաղափարախօսութիւն:

Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Միութեան դար կազմող պատմութիւնը հարստացած է բազմաթիւ յիշարժան անուններով: Փառք ու պատիւ հիմնադիրներուն եւ անոնց նուիրական գործը շարունակող անցեալի եւ ներկայի բոլոր նուիրեալներուն:

100-ամեայ միութիւնը այսօր տարեդարձ կը տօնէ: Տօն է եւ յոբելենական մեծ հանդէս, տօնախմբութիւն, որուն մասնակիցն է Եգիպտոսի ամբողջ համայնքը: Յոբելենական հանդիսութիւնը սկսաւ պասքէթպոլի մրցաշարքով, ապա հանդիսաւոր տողանցքի ընթացքին «Հ.Մ.Ը.Մ. Նուպար Աղեքսանդրիա» ակումբը՝ 100-ամեակի առթիւ, ստացաւ բազմաթիւ նուէրներ՝ Եգիպտոսի մարզական եւ մշակութային միութիւններէ:

Մարզական Միութեան ատենապետուհի տիկ. Անի Թիւթիւնճեան իր խօսքը սկսաւ եւ աւարտեց շնորհակալութիւն յայտնելով նախկին եւ ներկայ վարչականներուն, գործունեայ մարզիկներուն, ժրաջան աշխատողներուն, ջանասէր տիկիներուն, որոնց ջանքերով պահպանւած է եւ կը յարատեւէ ակումբի խանդավառ կեանքը: Տիկ. Թիւթիւնճեան 100-ամեակի մետալներ եւ արծաթեայ պնակներ յանձնեց վեթերան մարզիկներուն,

շար. էջ 20 →



## ՍԱՐՈՒԽԱՆ ԵՒ ՇԱՀՊԱԶ



Իր մահէն 47 տարիներ ետք Ալեքսանդր Սարուխան (1898-1977) կը շարունակէ զարմացնել մեզ իր յորդառատ վրձինով կամ մատիտով, որուն ամբողջական արգասիքը տակաւին չենք տեսած:

Անակնկալ էր Սարուխանի թոռնուհին՝ տիկին Սիլվա Ներետեան-Բլատեանին կողմէ լոյսին հանուած այս երգիծանկարը, որուն բնորդը աղեքսանդրահայ մտաւորական-գրագէտ Ստեփան Շահպազ փաստաբանն է, եւ որուն գրականութեան կարապի երգը՝ «Մարդուն Ձեռքերը» անտիպ հատորը հրատարակուեցաւ ընթացիկ տարուան Մայիսին, ՀԲԸՄի Գահիրէի Մասնաճիւղին Ս. Չագըր Հիմնադրամի «Արխիւ» մատենաշարով (թիւ 6):

Ափսոս որ նախապէս լոյսին չէր եկած այս երգիծանկարը, որպէսզի զայն կցէինք ընթացիկ տարուան մէջ հրատարակուած Շահպազի վերջին գիրքին:

→ շար. էջ 19 էն

## ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

վարչականներուն, բոլոր Եգիպտահայ մարզական միութիւններուն, որոնք մաս կը կազմեն յոբելենական մրցաշարքին եւ հանդիսաւոր տողանցքին: Պարգեւատրուեցան վեթերան անդամներ, նախկին եւ ներկայ մարզիչներ, լաւագոյն խաղացողներ... Հնչեցին շնորհաորանքի եւ շնորհակալութեան ցերմ խօսքեր, ներկաներուն մտապատկերներուն մէջ արթնցան շատ գեղեցիկ յուշեր, երանելի պահեր...

Հանդիսութիւնը շարունակեց պասքէթպոլի մրցաշարքին հերթական խաղը:

Խաղացողներուն կը մաղթենք յաղթանակ, հանդիսութեանը՝ խանդավառութիւն, Մարզական Միութեանը՝ անսպառ եռանդ, հայրենանուէր առաքելութիւնը շարունակելու: 100-ամեայ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեանը դարձեալ կը շնորհաւորենք եւ կը մաղթենք առաւել արդիւնաշատ գործունէութիւն, ի փառս Եգիպտահայ համայնքի:

**Անժիկ Յակոբեան-Կանիմեան  
Աղեքսանդրիա**



ԵՐԿՈՒ ԵԳԻՊՏԱՀԱՅԵՐ

*«Հաւաքեց, վերյիշեց, նօթագրեց իր կարելիութեան սահմաններուն մէջ Արամ Բ. Աճէմեանը»:*

*Այսքանը գրուած է մեքենագրուած եւ սրբագրութիւններով լեցուն երեք էջերու վերջաւորութեան, որոնց տակ դժբախտաբար թուականը կը պակսի: Կ'ենթադրենք թէ պէտք է գրուած ըլլայ 1977-էն ետք, որովհետեւ կենսագրութեան տէրը մահացեր է 1977 թուականին:*

*Նոյն Աճէմեանը իր Յ.(եփ) Գ.(րութեան) մէջ կը նշէ.*

*«Այս հայանցիկ կենսագրականին վրայ կրնաք աւելցունել իր ժամանակակից ընկերներուն յուշերը, նաեւ կրնաք սրբագրութեան ենթարկել զայն, կրնայ ըլլալ որ սխալներ ունենամ: Օրհնեալ ըլլայ յիշատակը բոլոր անոնց, որոնք զոհուեցան վասն հայրենեաց եւ կրօնքի»:*

*Մեքենագրուած երեք թերթերուն պահպանակին վրայ ձեռագիր ֆրանսերէն գրուած է՝ «Histoire de mon oncle Haig Varvarian»: Կը հասկնանք թէ Հայկ Վառվառեան եղեր է հօրեղբայրը Ստեփան Վառվառեանի, որուն կինը՝ Քրիստին Չաքրճեան-Վառվառեան ինք մեզի յանձնեց այս թղթապանակը:*

*Կագ մը ուղղագրական, քերականական եւ շարահիւսական սրբագրութիւններ ըրած ենք, ընթերցումը աւելի հեզասահ ընծայելու համար (խմբ.):*

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՏՕՔԹ. ՀԱՅԿ, ՀԱՅԿԱԶՈՒՆ ՎԱՌՎԱՌԵԱՆԻՆ

Բնիկ Եոզկատցի

(1884-1977)

Տօքթ. Հայկազուն Վառվառեան ծնած է Փոքր Հայքի Եոզկատ քաղաքին (Կեդրոնական Անատոլիոյ բարձրավանդակ) Չափան Օղլու Եոզկատը կոչուող գիւղաքաղաքին մէջ, Ստեփան եւ Ռեբեկա Վառվառեաններու յարկին տակ:

Նախնական ուսումը ստացեր է Եոզկատի Ազգային Խորէնեան Վարժարանին մէջ: Իր ցուցաբերած կարողութեանց միջոցաւ ազգային տոհմիկ ուսում կը ստանայ, որպէս ապագայ խոստացող աշակերտ:

Տեղւոյն մէջ բարձրագոյն վարժարան չըլլալուն, զինք կը դնեն կառավարական դպրոցը, որ կը կոչուէր Իտատի է Մէքթէպի, որպէսզի հմտանայ իշխող լեզուին՝ թրքերէսին մէջ: Հոն իր կարողութիւնները ի գործ դնելով, ամենափայլուն աշակեր-

տը կը հանդիսանայ, առաջին ելլելով: Ամավերջի հանդիսութեանց մէջ բոլորին գնահատանքին արժանանալով, իբրեւ նուէր ու մրցանակ կը ստանայ գրկալեցուն գրքեր: Այս ընթացքով հպարտութեան առարկան կը դառնայ հայ ազգին, թրքական կառավարութեան նախանձը քրքրելով հայերուն վրայ:

Հայկական ու թրքական լեզուներուն բաւական հմտանալէ վերջ, իր ծնողքը զինք կը դնեն Մարզուանի «Մէրզուֆուն»ի Անատոլու Գոլէճը, որ կարենայ եւրոպական օտար լեզուներ սորվիլ, իր ապագայ մասնագիտութեանց հետեւելու համար: Գոլէճին ընթացքը մեծ յաջողութեամբ աւարտելէ վերջ, պատանի Հայկազուն, միշտ վեր բարձրացնելով հայուն համբաւն ու նահապետական փառ-



քերը օտար ամերիկեան միսիոնարութեան մօտ, սիրելի կը դառնայ իր գտնուած շրջապատին մէջ:

Երիտասարդ Հայկազունին փափաքին ընթացք տալով, իր ծնողները կ'որոշեն զինք Պէյրութ-Լիբանան տանիլ, հոն հետեւելու համար բարձրագոյն ուսման ու մասնագիտութեանց, եւ ընկերակցելով իրենց որդւոյն կ'երթան Լիբանան, իրենց զաւակը չզրկելու համար ընտանեկան օճախին բարեմասնութիւններէն (հաճեցէք հոս յիշել համալսարան մուտքի թուականը): Իր ունեցած յանձնարարականներուն միջոցաւ անմիջապէս կ'ընդունուի համալսարանին ընդհանուր բժշկական եւ նաեւ գործողութեան մասնագիտութեանց բաժնին մէջ: Փայլուն կերպով աւարտելէ վերջ համալսարանին ընթացքները, ամենաբարձր նիշերով կը ստանայ համապատասխան վկայականներ:

Իր երկարատեւ երազներուն իրականացմամբ ու յաջողութիւններով ուրախ ու երջանիկ Հայկազուն իր ծնողաց հետ կը վերադառնայ ծննդավայրը՝ Եոզկատ, ու կը սկսի իր բժշկական ու ազգային աշխատանքներուն, եոզկատահայութեան ուշադրութիւնը իր վրայ գրաւելով: Կը մասնակցի ազգային ու հասարակական ժողովներուն ու գործունէութեան: Բայց տեսնելով Եոզկատի նեղ շրջանակը, որ իր ուզածին պէս կարենայ ի գործ դնել իր մասնագիտութիւնները աւելի լայն շրջանակի եւ ասպարէզի մէջ, կը տեղափոխուի Գաղատիա՝ Անգարա, որ այն ժամանակին Օսմանեան Կայսրութեան մայրաքաղաքն էր ու Թուրքիոյ մէջ ամենափայլուն կեդրոնը, կրնար աւելի օգտակար ըլլալ իր ազգին ու համայն ժողովուրդեանց: Հոն ալ ի գործ դնելով իր գիտութեանց շնորհները, օգտակար կ'ըլլայ ազգին զաւակներուն, մաս կազմելով ազգային ժողովներուն վարչական մարմիններուն ու սրտին մէջ մեծ գոհունակութիւն ու երջանկութիւն զգալով ժամանակ մը կ'ապրի:

Թշուառ հայուն դժխեմ բախտը զինք կը հալածէ ուր որ ալ երթայ. իր յաջողութիւններուն գագաթնակէտին հազիւ հա-

սած, երբ պիտի վայելէր իր բազում աշխատանքներուն պտուղը, վրայ կը հասնի 1914-ի Առաջին Համաշխարհային Պատերազմը, ու իրերու ընթացքը վեր ի վայր կը շրջի՝ ջարդ, զինուորահաւաք, ընդհանուր տեղահանութիւն ... Այսպէսով հայեր դուրս քշուելով իրենց պապենական օճախներէն, զրկուելով իրենց դարաւոր բոյներէն, կը բռնեն գաղթականութեան փշոտ ու արիւնոտ ճանապարհները, մինչեւ Սուրիոյ անջրդի, կիզիչ Տէր էլ Զօրի անապատները:

Պատերազմի ժամանակ, կառավարութեան հրամանին ենթարկուելով, Տօքթօրը կը ձերբակալուի, զինուորագրուելով կ'երթայ բանակ ու հոն բժշկական զինուորական բաժնին մէջ իբրեւ **գափիթէն** կը պաշտօնավարէ, օգտակար ըլլալով մեր շատ մը ազգակիցներուն: Այս կացութիւնը շատ չի տեւեր ու հրաման մը կ'ելլէ որ հայ բարձր պաշտօնէութիւնը գործէն ու պաշտօնէն զերծ պահելով, պէտք է անորոշ ուղղութեամբ տեղահանուին: Այս հրամանին վրայ Տօքթօրը կը ձերբակալուի ու կը ղրկուի Պոլսոյ Կեդրոնական բանտը: Հոն կը մնայ ժամանակ մը առանց դատավարութեան: Բանտին մէջ իսկ ճարպիկ, խելացի ու աչքաբաց Հայկազունը աչքի կը զարնէ իր ուշիմութեամբ ու սիրելի կը դառնայ բոլոր բանտարկեալներուն:

Այնպէս կը պատահի, որ բանտապետին մանչ զաւակը թոքատապէ կը տառապի եւ բժիշկի պէտք կ'ունենայ: Կը դիմեն Տօքթօրին, որ բանտապետին տունը երթալով կը դարմանէ հիւանդը: Ասոր վրայ բանտապետը իբրեւ երախտագիտութիւն, կ'ուզէ Տօքթօրը բանտէն ազատել եւ բժիշկին փափաքին վրայ զինք կը ղրկէ Արեւելեան ճակատ, քաջ գիտնալով որ հոն Հայաստանի սահմանակից է եւ կրնայ որեւէ ձեւով Հայաստան անցնիլ:

Երբ թրքական ճակատը փուլ եկած, բոլոր զինուորները նահանջի վրայ են դէպի հարաւային ներքին գաւառները, բարոյալքուած, իրենց ետին ձգելով իրենց ծանր ու թեթեւ զէնքերը, Տօքթօրը կը պահուրտի լքեալ թնդանօթներուն ետեւ ու յարմար ժամանակին կ'անցնի Հայաս-





տան, ուր կը միանայ հայկական բանակին:

1917-1918-ի ժամանակներն էին, Հանրապետության ժամանակ, իր ազգասիրական ոգին զինք խթանելով, իր ամբողջ մտային ու մասնագիտական կարողութիւնները նուիրելով ազգին, անտէր, ուժասպառ բեկորներուն օգնութեան կը հասնի ու կը սկսի ծառայութեանց: Հոն վեց հայ եւ ռուս զինուորական հիւանդանոցներու մէջ վիրաւոր զինուորները գործողութեանց կ'ենթարկէ շատ նեղ պայմաններու մէջ: Ընդծովեայով, կեանքը վտանգի ենթարկելով Սեւ ծովէն Պոլիս կ'երթայ ու անկէ պէտք եղած դեղերը առած կը վերադառնայ Հայաստան: Բազմաթիւ հիւանդներ բուժելով զանոնք իրենց ընտանիքներուն կը վերադարձնէ:

Հայաստանի ամենէն տկար ժամանակն էր. Ամերիկայէն օգնութիւն կը հասնի. իբրեւ ձեռնհաս եւ անգլիախօս մարդ զինք լիազօր պաշտօնեայ կը նշանակեն: Ուտելիք, հագուստ, դեղորայք եւ զանազան իրեր կու գան Վրաստանի վրայով, բայց մինչեւ Հայաստան հասնիլը կէսը կը կողոպտուի արդէն: Տօքթորը իւրաքանչիւր **վակոսին** հայ զինուոր մը պահակ կը դնէ որպէսզի առաջքը առնէ կողոպուտին եւ ապրանքը ապահով կերպով Հայաստան հասնելով նպատակին ծառայէ:

1920-ականներուն, երբ սոցիալական կարգերը կը հաստատուէին Հայաստանի մէջ, Տօքթորը իր ճարպիկութեամբ ճամբայ մը գտնելով Սեւ ծովուն վրայ, թրքական նաւահանգիստ մը կ'ապաստանի ու ժամանակ մը վերջ Եգիպտոս կ'անցնի: Հոն կը սկսի իր ծառայութեան նուիրուած կեանքը:

Հաւատաւոր անդամ ըլլալով Ռամկավար Ազատական Կուսակցութեան, իր կարելին կ'ընէ, կուսակցութիւնը կը կանոնաւորէ եւ ամուր հիմերու վրայ դնելով կը զօրացնէ զայն:

Ինքն է որ հիմը դրած է Ազգային Հիմնադրամին:

Եգիպտոս հաստատուելէ ետք չէ զբաղած բժշկութեամբ, այլ առեւտուրով. Գերմանիայէն փիանօներու, ֆօնօկրաֆներու եւ պատրաստ հագուստներու խա-

նութներ կը բանայ Գահիրէի եւ Ադեքսանդրիոյ մէջ եւ հիմը կը դնէ Գահիրէի «Փրէնսէս» հաստատութեան, գործակից ունենալով եղբայրը՝ Կարապետ Վառվառեանը, ինչպէս եւ Զարմայր Քէշիշեանը եւ այլ ազգականներ: «Փրէնսէս»ը հայկական հաստատութիւններուն կարեւոր կեդրոններէն մէկը եղած է:

Շրջան մը ետք կ'անցնի Աթէնք (Յունաստան), վեց ամսուան մէջ յունարէն կը սորվի՝ գրել, կարդալ, խօսիլ եւ կը բանայ գորգի գործարան մը հայ գաղթականներուն գործ հայթայթելով, օգտակար կը դառնայ ազգին: Ապա կը հիմնէ կնոջական մետաքսեղէնի հաստատութիւն մը: Աթէնք կը մնայ մինչեւ Համաշխարհային Երկրորդ պատերազմը:

Աթէնքի մէջ կ'ամուսնանայ Վերժին Նիկողոսեանի հետ, 1920-ին եւ կը բախտաւորուի առջինեկ աղջիկ զաւակով մը: Երկրորդ զաւակը մանչ մը կ'ունենայ (հաճեցէ՛ք յիշել անունը): Մանչը սակայն եղերական արկածով մը կը մահանայ, նոր շինուելիք ապարանքին կիրի հորին մէջ իյնալով: Այս մահը շատ ծանր կ'ազդէ Տօքթորին վրայ: Զաւկին բարձր միջտ իր հետ կը տանէր ո'ւր որ երթար եւ գլուխը այդ բարձին դրած կը քնանար:

Համաշխարհային Երկրորդ պատերազմի ընթացքին, գերմանական գրաման ժամանակ, շատ նեղ ու վտանգաւոր պայմաններ կ'ապրին Աթէնքի մէջ, ու շատ անգամ ստոյգ մահէ կ'ազատին, կուսակցական պարապ պայքարներով, ԷԱՄներուն<sup>1</sup> ժամանակ:

Զինադադարին, Յունահայոց Ազգային Պատգամաւոր ընտրուելով, կաթողիկոսական ընտրութեան համար Հայաստան կ'երթայ: Ընտրութենէն ետք, Եգիպտոսէն անցնելով իր գործերուն հաշուեյարդար կ'ընէ եւ Յունաստան կը վերադառնայ:

Սակայն Յունաստանը վտանգուած համարելով, կ'ուզէ աւելի ապահով տեղ մը կայք հաստատել, եւ բաւական երկիրներ այցելելէ ետք, կեցութեան հրամանագիր ստանալու համար, Հարաւային Ափրիկէի Ճոհաննէսպուրկ քաղաքը հաստատուելու հրամանագիր կրնայ ստանալ:

→ շար. էջ 24



## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՈՊԷԼԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ ՀԱՅԱԶԳԻ ՏԱՐՕՆ ԱՃԷՄՕՂԼՈՒ

14 Հոկտեմբերին Շուէտի Գիտութիւններու Թագաւորական Ակադեմիան յայտարարեց, որ 2024-ի տնտեսագիտութեան Նոպելեան մրցանակին միաժամանակ կը տիրանան Տարօն Աճեմօղլուն (Աճեմեան), Սայմըն Ճոնսընը եւ Ճէյմս Ռոպինսընը՝ իրենց «Հաստատութիւնները ինչպէ՛ս կը ձեւաւորուին եւ կ'ազդեն բարեկեցութեան վրայ» կատարած հետազօտութեան համար:

«Այն հասարակութիւններուն մէջ, ուր օրէնքի գերակայութիւնը տկար է եւ հիմնարկները կը շահագործեն բնակչութիւնը»



→ շար. էջ 23 էն

### ԵՐԿՈՒ ԵԳԻՊՏԱՀԱՅԵՐ

Ճոհաննէսպուրկի մէջ տփեղէնի գործարան մը կը բանայ եւ իր պտղաստանով կը զբաղի:

Իր տիկնոջ մօտիկ ազգականները Յունաստանէն իր մօտ կը բերէ, զիրենք աւելի ապահով պայմաններու մէջ դնելու համար:

Ուղեղային կաթուած ունենալով, շրջան մը տառապելէ ետք կ'աւանդէ հոգին խոր ծերութեան մէջ:

Տօքթ. Հայկազուն Վառվառեան ունեցած է ազգային հասարակական բեղուն գործունէութիւն: Աշխատակցած է բազմաթիւ թերթերու գրելով յօդուածներ, բանաստեղծութիւններ, թատրերգութիւններ, թարգմանութիւններ, որոնցմէ ամենէն կարեւորն է Սասունցի Դաւիթի անգլերէն թարգմանութիւնը: Ունեցած է համբաւ եւ իր ետին բարի յիշատակ ձգած է:

Լիայոյս եմ, որ Ռամկավար Ազատա-

կան Կուսակցութիւնը իր պատմութեան մէջ պիտի անմահացնէ իր աննման ընկերոջ ու նուիրեալ ազգային զինուորին անունն ու գործունէութեան մանրամասնութիւնները:

«Կեանքէն ինծի ի՞նչ մնաց» կ'ըսէ մեր բանաստեղծութեան անմահանուն իշխան Վահան Թէքէեանը, «Ինչ որ տուի ուրիշին, զարմանալի՛, այն միայն»:

Ուստի հանգուցեալ տօքթ. Հայկազուն Վառվառեան իր կենդանութեան տուաւ ինչ որ ունէր՝ իր հմտութիւնը, գիտութիւնը, դրամը, ժամանակը իր տառապեալ ազգին, իրեններուն, նաեւ համայն մարդկութեան:

Օրհնեալ ըլլայ իր անմահ յիշատակը:

**Արամ Բ. Աճեմեան**  
(ստորագրութիւն)

<sup>1</sup>Յունարէն՝ Εθνικό Απελευθερωτικό Μέτωπο, Ազգային Ազատագրական Ճակատ, կազմուած 1941-ին, որպէս ազգային-ազատագրական ճակատային քաղաքական կուսակցութիւններու, խմբաւորումներու, դեմոկրատական կազմակերպութիւններու եւ առանձին հայրենասէրներու միաւորում:



նը, աճ կամ դրական փոփոխություն չ'արձանագրուիր: Դափնեկիրներուն հետազոտությունը կ'օգնէ մեզի հասկանալ, թէ՛ ինչո՞ւ», կը նշէ Շուէտի Գիտություններու Թագաւորական Ակադեմիային յայտարարութիւնը:

Երեք տնտեսագէտները կը կիսուին մրցանակին նիւթական պարգեւը՝ 11 միլիոն քրոն (1,1 միլիոն տոլար):

Այսպիսով, Աճեմօղլու կը դառնայ վերջին չորս տարիներուն Նոպէլեան մրցանակ շահած երկրորդ սփիւռքահայը: 2021-ին, բժշկագիտութեան Նոպէլեան մրցանակին արժանացած էր կենսաբան, նեարդաբան լիբանանահայ-ամերիկահայ Արտեմ Փաթափութեանը:

Ո՞վ է Տարօն Աճեմօղլու:

Տարօն Աճեմօղլու ծնած է 1967-ին, Պոլիս: Զաւակն է իրաւաբան Գէորգ Աճեմեանի եւ կրթական մշակ ու գրող Իրմա Աճեմեանի (այժմ մահացած), որ շրջան մը վարած է Պոլսոյ Գատրգիւղ շրջանի Արամեան-Ունճուեան վարժարանի տնօրէնութիւնը: Աճեմօղլու նախնական ուսումը կը ստանայ այս վարժարանին մէջ, զոր աւարտելէ ետք, կը յաճախէ եւ 1986ին-ին կ'աւարտէ Պոլսոյ Կալաթասարայի վարժարանը, որմէ ետք ուսումը կը շարունակէ Անգլիոյ մէջ, ուր կը հետեւի «Եորք» համալսարանի տնտեսագիտութեան բաժինին եւ կը վկայուի պսակաւոր արուեստից աստիճանով (BA): Մագիստրոսական (MA) եւ վարդապետական աստիճանները (PhD) կը ստանայ Լոնտոնի տնտեսագիտական համալսարանէն, ուր կը դասաւանդէ նաեւ 1992-1993 թուականներուն:

Ապա կ'անցնի Միացեալ Նահանգներ, ուր 1993-էն սկսեալ կը դասաւանդէ Մասաչուսեցի MIT աշխարհահռչակ համալսարանին մէջ:

2015-ին կը գրաւէ տնտեսագիտական հետազոտություններու հրատարակութիւններով զբաղող «RePEc» (Research Papers in Economics) ակադեմական հարթակի հրապարակած տնտեսագէտներու

վարկանշային ցանկի առաջին դիրքը եւ կը նկատուի աշխարհի ամենէն ազդեցիկ տնտեսագէտ մտաւորականներէն մէկը՝ ամերիկեան «Ֆորէյն Փոլիսի» պարբերաթերթին բնորոշումով:

2017-ին մեծ հռչակ կը շահի Ճէյմս Ռոպինսոնի հետ իր համահեղինակած «Ինչո՞ւ պետությունները կը ձախողին» խորագրով գիրքի հրատարակութեան առիթով:

Տարօն Աճեմօղլու այժմ կը կրէ ամերիկեան հպատակութիւն: Ան սահուն կը տիրապետէ անգլերէնին, թրքերէնին եւ մասամբ՝ հայերէնին:

Ամուսնացած է MIT-ի ելեկտրա-ճարտարագիտութեան եւ համակարգչային գիտութեան դասախօս Ասուման «Ասու» Օզտաղլարի հետ, դուստրը՝ Թուրքիոյ նախկին նախարարներէն՝ Իսմայիլ Օզտաղլարի:

2015-էն ի վեր, անոնք կ'ապրին Մասաչուսեց նահանգի Նիուօրն քաղաքը, իրենց երկու զաւակներուն՝ Արտայի եւ Արազի հետ:

Աճեմօղլու հեղինակ է ակադեմական հարիւրաւոր աշխատություններու: Ան դիտել կու տայ, թէ իր հետազոտություններուն մեծ մասը կը միտի հասկնալու «աղքատութեան աղբիւրները»: Անոր հետազոտությունները կ'ընդգրկեն բազմազան թեմաներ, ներառեալ՝ քաղաքական տնտեսությունը, մարդկային դրամագլուխի տեսությունը, բարգաւաճման տեսությունը, տնտեսական զարգացումը, նորարարությունը, աշխատուժի տնտեսագիտությունը, եկամուտի եւ աշխատավարձի անհաւասարութիւնը, ցանցային տնտեսագիտությունը եւ այլն:

2018-ին, շուկաներ շրջան կ'ընէին, թէ Թուրքիոյ նախագահ Էրտողան կը ծրագրէ Աճեմօղլուն ներառնել այդ օրերուն կազմուելիք կառավարութեան մէջ: Աճեմօղլու զանոնք տարածայնութիւն կ'որակէ:



Մամլոյ Հաղորդագրութիւն

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԵՐԿՈՒ ՆՈՐ ԳԻՐՔ ՄԱՅՐԵՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԵՆԷՆ

Փորթսմութ, Ռոտ Այլընտ.- Անցեալ դարասկիզբին, 1912–1914 տարիներուն, Օսմանեան տիրապետութեան ներքեւ հեծող հայոց կեանքը, ինչքն ու պատիւը ապահովելու նպատակով Ամենայն Հայոց Կաթողիկոսին նախաձեռնութեամբ վերակենդանացած բարենորոգումներու շարժումը ներկայացնող վաւերագրային ժողովածոներ եւ ուսումնասիրութիւններ ու յուշագրական նշումներ կը ներկայացնեն նկատառելի թիւ մը:

Ատով հանդերձ, նորայայտ նիւթեր պատեհութիւն կ'ընծայեն նոր մանրամասնութիւններով ընդարձակելու մեր գիտելիքներն ու նոր լոյսով մօտենալու խնդրոյ առարկայ նիւթին, ինչպէս ի յայտ կու գայ Մայրենի Հրատարակչութեան հրապարակ հանած հետեւեալ նորագոյն հրատարակութիւններէն, երկուքն ալ կազմուած եւ ծանօթագրուած Դոկտ. Վաչէ Ղազարեանի կողմէ՝ Երուսաղէմ պահպանուող Պոլսոյ Տեղեկատու Դիւանի եւ Փարիզի Նուպարեան Մատենադարանի անտիպ վաւերագրերուն օգտագործումովը:

\* \* \*

### Ա.- ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՌՆՉՈՒՈՂ ՆԻԻԹԵՐ (1912-1914)

Այս խորագիրը կրող եւ 336 էջերէ կազմուած հատորը պատրաստուած է գլխաւորապէս ներկայացնելու հայկական բարենորոգումներու ծրագրով զբաղելու համար Թուրքիոյ Հայոց Ազգային Ընդհանուր Ժողովէն ընտրուած Ապահովութեան Խորհրդարանական Յանձնաժողովի եւ նոյն ժողովին Կեդրոնական Վարչութիւնը կազմող մարմինն կողմէ նշանակուած Ապահովութեան Վարչական Յանձնաժողովի նիստերու ատենագրութեան նորայայտ Բ. տետրին բո-

վանդակութիւնը:

Ձեռագիր տետրը կ'արձանագրէ պատմութիւն մը, որ կը սկսի 19 Յունիս 1913-ին, երբ արդէն որոշուած էր որ եւրոպական մեծ պետութիւններու Պոլսոյ դեսպանները զբաղին բարենորոգումներու ծրագրով, եւ կ'աւարտի Ռուսաստանի եւ Թուրքիոյ միջեւ ստորագրութեամբ բարենորոգումներու համաձայնագրին՝ 16 Փետրուար 1914-ին:

Յարակցաբար, «Յաւելուած» բաժնով կը ներկայացուին առաւելաբար անտիպ 50 վաւերագրեր, որոնց մէջ առանձնատուկ շահեկանութիւն կը ներկայացնեն շահագրգիռ կողմերու տեսակէտները պարունակող բանակցային բնոյթի նիւթերը:

Կազմողն անհրաժեշտն նկատած է նաեւ «Վաղորդայն» խորագրեալ բաժնով հպանցիկ անդրադարձում մը կատարել համաձայնագրի կնքման յաջորդող շրջանին:

Հատորը կը պարփակէ գրականութեան մասնակի ցանկ եւ անուանացանկ, ինչպէս նաեւ կազմողին կողմէ ներածական մը՝ Ազգային Ընդհանուր Ժողովի նիստերուն ընդմէջէն ամփոփելու բարենորոգումներու ծրագրին նախապատմութիւնը, եւ վերջաբան մը, ուր կը ջանայ յստակացնել յիշեալ զոյգ յանձնաժողովներուն եւ Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան ու Պօղոս Նուպարի գլխաւորած Փարիզի Հայ Ազգային Պատուիրակութեան յարաբերութիւններուն վերաբերող տեղեկութիւններ:

Ընթերցողը կը մղուի մտորելու ռուս եւ թրքական համաձայնագրին նշանակութեան եւ հարստահարուող հայոց կեանքի, ինչքի եւ պատիւի ապահովութիւնը միայն խաղաղ բանակցային ուղիով ձեռք բերելու ճիգերուն մասին:



### Բ.- ՆԻԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈՂՈՒՄՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ (1912-1913)

174 էջերի բաղկացած այս հատորը ընթերցողին կը ներկայանայ երկու ինքնաբացատրական ենթախորագրերով՝ «Հայկական Բարենորոգումներու Շրջանին Առնչուած Նամակներ Արշակ Չօպանեանէն» եւ «Յստակացումներ Կիլիկեան Ինքնապաշտպանական Փորձի Մասին»:

Առաջինը՝ յարաբերաբար փոքրածաւալ նիւթ մը, կը ներկայացնէ Չօպանեանէն նամակներ, ուր վերը յիշուած Ապահովութեան Վարչական Յանձնաժողովին ուշադրութեան կը բերուին բարենորոգումներուն առնչուած փարիզեան անցուդարձեր եւ անձնական կարծիքներ:

Երկրորդը՝ աւելի ընդարձակ, կը զբաղի 1912-ի վերջերուն Միհրան Տամատեանի եւ գործակիցներու կողմէ Եգիպտոս կեանքի կոչուած Ազգային Պաշտպանութեան Քոմիթէին հետ կապուած յստակացումներով, որոնք անհրաժեշտ դարձուցած են հատորին մէջ ընդգրկումը այդ մարմնին գործունէութեան վերաբերող տպագրեալ նիւթերու (Տամատեանի կեանքին եւ գործին նուիրուած Պետրոս Տեփոյեանի աշխատութեան համապատասխան գլուխը, ապստամբութիւնը գլխաւորելու հրաւիրուած Մուշեղ Սերոբ-

եանի տպագիր յուշերը) եւ նոյն Սերոբեանի անտիպ ձեռագիր Ինքնակենսագրութեան այն էջերուն, ուր ան կ'արտայայտուի ապստամբական ծրագրին մասին, միաժամանակ ներկայացնելով այդ խնդրով Տամատեանէն, Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Սահակ Բ. Խապայեանէն, Պօղոս Նուպարէն եւ այլոցմէ իրեն ուղղուած նամակները:

Ինքնապաշտպանական փորձին ճախողութեան պատճառներուն անդրադարձում կատարուելէ ետք, այս հատորն ալ, նախորդին նման, կը փակուի ընթերցողը մտորման մղող հարցադրումով մը՝ թէ ինչո՞ւ բարենորոգման ծրագրին հետամուտ պատասխանատու մարմիններ իրենց դիւանագիտական աշխատանքներուն չէին զուգակցած ուժային քայլեր:

\* \* \*

Հետաքրքրուողներ կրնան հատորներու ձրի թուային օրինակները ձեռք բերել կայքէջերէն Համահայկական Թուանշային Գրադարանին (<https://arar.sci.am/-dlibra>) եւ Մայրենի Հրատարակչութեան (<https://mayrenipublishing.com>): Մայրենիի կայքէջը նաեւ կ'ընձեռէ աշխատութիւններուն առցանց թերթատումով ծանօթանալու հնարաւորութիւնը:



ԲԱՐՈՎ ԵՐԹԱՍ, ՎԱՀԱՆ  
(20 Հոկտեմբեր 1963 - 16 Հոկտեմբեր 2024)

Նորա Գոլոյեան-Քէօհնէլեան

Սիրելի զարմիկի մը մահը խօսքով սգալը բաւական դժուար պարտք մըն է, ներառեալ ներկայ հոգեկան ցաւը որ կը կուտակէ այն կսկիծն ու աւելի կը դժուարացնէ պարտականութիւն մը, մանաւանդ երբ յաջողակ ու բացառիկ նկարիչի մը մասին է մահագոյժը, որ արժանի է պատշաճ կենսագրական գիրքի մը հեղինակութեան:

Անցեալ շաբաթ Եգիպտոսի արուեստի եւ մշակոյթի համայնքը կորսնցուց իր ամենատաղանդաւոր անդամներէն մէկը՝ Եգիպտահայ նկարիչ Վահան Դելփեանը: Անոր ոսկէ սիրտը բաբախելէ դադարեցաւ:

Վահան ծնած է 1963 թուականին, երբեք չէ հեռացած իր ծննդավայր Գահիրէի կեդրոն՝ Մոհամետ Մահմուտ փողոցէն: Ուսումը ստացած է Գալուստեան Ազգային Վարժարանէն ներս, ապա աւարտած է Հելլուան համալսարանի արուեստի կաճառը՝ քանդակագործութեան պսակաւոր արուեստի աստիճանով: Զբաղած է նկարչութեամբ, քանդակագործութեամբ եւ **փեքորաթիւ** գործերով: Վահանը ներշնչուած է իր արուեստի ուսուցիչ Շանթ Աւետիսեանէն եւ կրած ազդեցութիւնը դաստիարակ Ահմետ Ֆուատ Սելիմի: Մի քանի տարի արուեստ դասաւանդած է Եգիպտահայ վարժարաններէն ներս:

Վահան հաւանաբար իր տաղանդը ժառանգած էր իր մօրեղբայր Վահան Ամատունիէն, մայրն արդէն Նոյն անունով անուանած է զինք, թէեւ երկուքը շատ քիչ հանդիպած են իրարու, քանի որ Ամատունին կ'ապրէր Հալէպ, ապա Պէյրութ եւ Լոս Անճելըս: Ամատունին ընդամենը երկու անգամ այցելած է Եգիպտոս, երբ Վահան երեխայ էր: Ժամանակի ընթացքին ընտանիքին անդամները նկատեցին



անոնց ապշեցուցիչ նմանութիւնը՝ արտաքնապէս, բնաւորութեամբ, ապրելակերպով եւ համոզումներով, Նոյնիսկ գծագրելու եւ քանդակելու ոճով:

Վահանին ընկերներն ու ծանօթները ժխտումի պահեր ապրեցան, երբ անոր մահուան լուրը սկսաւ աստիճանաբար տարածուիլ: Ոմանք անոր դիմատետրի պատին վրայ հարցեր տուին՝ «Վահան, լա՞ւ ես», «Ո՞ր ես»: Նոյնիսկ երբ ընտանիքը պաշտօնապէս յայտարարեց մահուան լուրը, այնքան ցնցուած էին շատեր, որ թերահաւատութեամբ կը մօտենային իրականութեան:

Եգիպտոսի մշակոյթի նախարարութիւնը տարածեց հետեւեալ յայտարարութիւնը, ուր նախարար Ահմետ Հեննոն կը սգայ Վահանին կորուստը.


«Եգիպտական եւ Արաբական արուեստը կորսնցուց վաստակաշատ նկարիչ մը, որ յստակ հետք թողած է քանդակագործութեան մէջ: Արուեստագէտ Վահան Դելփեանը ստեղծարարութեան եւ զանազանութեան խորհրդանիշն էր, ան ներկայացուցած է բազմաթիւ քանդակներ, որոնք հարստացուցած են Եգիպտոսի եւ Արաբական մշակութային տարածքը»:

2007-ին, երբ Արաբական լրագրութեան «Հէյքալ» հիմնադրամը ինձի առաջարկեց միանալ նորաստեղծ հիմնադրամի աշխատակիցներուն, համաշխարային յայտնի լրագրող Մոհամետ Հասանէին Հէյքալ անձնապէս փափաք յայտնեց ծանօթանալ ինձի հետ, ժամադրուելով «Պերգաշ»՝ իր հանգստեան տունը: Հարցազրոյցը վարելու ընթացքին շրջագայութեամբ ցոյց կու տար իր սեփական հսկայ տարածքը: Տեսայ քանդակ մը որ ինձի շատ ծանօթ թուաց իր իւրայատուկ ոճով: Չյապաղեցայ հարցնել Հէյքալին, քանդակի հեղինակին մասին: «Եգիպտահայ քանդակագործ է, բայց այս պահուն չեմ յիշեր անունը,» պատասխանեց: Անմիջապէս «Վահան Դելփեա՞ն» ըսի: Հէյքալ զարմանք յայտնելով ըսաւ՝ «Այո՛, ճիշտ ես, բայց ինչպէ՞ս գիտցար», «Զարմիկս կ'ըլլայ» ըսի:

Վահանի քանդակներուն մեծ մասը երկաթ սարքաւորումներ են, երբեմն հսկայական եւ մարդկային մարմնի տեսքով: Անոնք թեքած են դէպի երկինք, օգնութիւն խնդրելու, աղօթելու կամ թռչելու: Վահանը ազատութիւնը փառաբանող մարդ էր: Մարսա Ալամ քաղաքին մօտ հսկայ նախագիծ մը հեղինակած է՝ 70 մէթր երկայնութեամբ եւ 30 մէթր լայնութեամբ: Այդ բնութեան մէջ տասնեակ ծառերու բուններ եւ ցօղուններ կանգնեցուց, որոնցմէ մի քանին ծածկած է պաղլեղածին (ալիւմինիում) թերթիկներով:

Արուեստաբան Ֆաթմա Ալին կ'ըսէ, քանի որ Վահանը երբեք բացատրութիւն չի տար իր գործերու մասին, «ոմանք կը տեսնեն այն, ինչ որ ես կը տեսնեմ, իսկ ուրիշներ նոյն ստեղծագործութիւնը որպէս շարժուող երկրի սեպեր եւ ոսկորներ կը տեսնեն: Երկու տեսիլքներն ալ երկրային արուեստի դպրոցին կը պատկանին»: Այո՛, Վահանը միշտ ալ կ'ըսէր, որ ինք երկիր մոլորակին կը պատկանի:

Յայտնի բժիշկ, մտաւորական եւ արուեստի սիրահար Մոհամետ Ապուլ-Ղարը չկարողացաւ Վահանի արուեստանոցը այցելել, հակառակ որ բազմիցս



ժամադրուած էին: Ան իր կսկիծը յայտնեց՝ «Միգուցէ մեր ճակատագրերը մեզ, մեր կորսուած հանդիպման պահէն մէկ օր ետք միացնէ», մէջբերելով բանաստեղծ Իպրահիմ Նակիի տողերը՝ Ում Բալսումի կատարած երգին, «Ալ-Աթլալ» (Աւերակները):

Նախկին եգիպտահայ, ամերիկահայ լրագրող Թովմաս Կորկիսեանը, որ ամէն տարի կ'այցելէ Եգիպտոս, իր կեանքի ընկերը կը սգայ. «Ես ապրեցայ պահեր երիտասարդ նկարիչ Վահանին հետ, երբ ան հետաքրքրութեամբ ու կիրքով կը հետեւէր ուսելիք փնտռող մրջիւններու շարանին:

Ես կը դիտէի Վահանին երբ իր անխոնջ գիծերն ու գոյները կը միացնէր, նկար մը ստեղծելու համար: Ես կը դիտէի, թէ ինչպէս ան կը հաւաքէր ծառի ճիւղեր, անտեսուած կոտորուած ապակիի եւ մետաղի կտորներ, որպէսզի իրար միացնէ այնպէս մը, որ իր երեւակայութիւնը արտայայտիչ ու գեղեցիկ առարկայ մը տեսնէ: Ես տեսած եմ Վահանին կառուցած փոքրիկ տնակը ծառի մը գագաթին, իր մեծ հօր տան կողքին: Իմ խօսքերով ես կը փորձեմ յաղթահարել արցունքներս ու խոր տխրութիւնս, երբ կը գրեմ արուեստագէտին մասին, անոր մարդու տեսա-



կին եւ արուեստին մասին, եւ այն ազդեցութիւնն ու ներկայութիւնը որ ունեցած է իմ կեանքիս, ինչպէս նաեւ իր ընկերներուն եւ սիրելիներուն կեանքին վրայ»:

Վահանի կեանքին փորձառութիւնը չի համապատասխաներ անոր տարիքին, որ առնուազն պէտք էր կրկնակին ըլլար: Ան իւրայատուկ երեւոյթ էր: Կեանքիդ ընթացքին միայն մէկ անգամ եթէ հանդիպէիր Վահանին, բաւարար էր որ ան դառնայ անմոռանալի երեւոյթ: Անոր նախասիրած պահերէն էր խարոյկին դիմաց ժամերով նստիլ ու անընդհատ խորհրդրդածել:

«Երբ կը ներես, կը բուժուիս, երբ ազատ կը թողես, կը զարգանաս: Սիրել կը նշանակէ համեմատելէ դադրիլ». Վահանի վերջին գրառումներն էին իր դիմատետրին էջին: Իր վերջին գծագրութիւններէն մին զետեղեց հոն, որ կը պատկերացնէր փշրուած դիմանկար մը, միգուցէ տառապանքը հաստատելով: Չեմ գիտեր թէ ե՞րբ ստեղծուած է այս նկարը, բայց Վահանը 2024 տարին նշած է:

«Վահանի հեռանալը ինծի սարսափ պատճառած է, օտարութեան հիւանդագին զգացումով լեցուած եմ: Վահան Դելփեանը ստեղծագործ տաղանդ է, մաքուր սիրտ է, բարի ու իսկական յատկանիշներով լեցուն: Քու հեռանալդ այս աշխարհէն ամենավատ բանն է որ քեզի նման բարեսիրտ մարդիկ կը գործեն», - կը գրէ Վահանի ընկերներէն մէկը՝ կիսելով նոյն գծագրութիւնը:

Վահանի հայրը լուսանկարիչ էր, անոր արուեստանոցը Մոհամետ Մահմուտի իրենց բնակարանի մութ սենեակներէն մէկն էր: Մեր մանկութեան լուսանկարներու մեծամասնութիւնը Վահանի հօր՝ Վահագնի աչքով նկարուած է: Արուեստանոցը իր կրտսեր եղբօր՝ Արամի անունը կը կրէր: Վահագնը եգիպտացի յայտնի պալերինա Մակտա Սալեհի գլխաւոր լուսանկարիչն էր, ինչպէս նաեւ ընտանիքին լաւ բարեկամը:

Վահան համոզուած էր, որ մարդ կը ծնի որոշակի տաղանդով մը, նոյնիսկ եթէ



այն բացայայտուի երկար տարիներ ետք: «Քու լուսանկարչական տաղանդդ նորութիւն չէ, դուն ես որ պատրաստ չէիր բացայայտել զայն, քանի զբաղ կեանք մը կը վարես», - ըսաւ ինծի: 2019-էն անդին Վահանը եղած է իմ ամենամեծ զօրավիգը: «Չմոռնաս որ արուեստը ժառանգական է», ան յաճախ կ'ըսէր ինծի:

Արուեստագէտ Հոսամ Սաքրը՝ համալսարանի դասընկերը, որ Վահանի հետ կը կիսուէր իրենց աշխատանքային տարածքներն ու նկարչական գոյները, Դիմատետրի իր էջով հրապարակած է Վահանին մշուշոտ լուսանկար մը, հետեւեալ գրառումով. «Իմ անցորդ ընկեր. ինչպէ՞ս անցաւ ճանապարհորդութիւնդ: Մի քանի օր առաջ դեղատուներ կը շրջէինք, ցաւազրկիչ կը փնտռէինք, ոչ թէ քու ցաւը չեզոքացնելու, այլ սիրելիներուդ ցաւը թեթեւցնելու համար: Երբ գտար, ուրախացար, եւ ցնծութեամբ ճամբայ ինկար, արագ հասնելու համար մօրդ: Դուն մեր հետ կիսեցիր քու ճամբորդութեանդ շատ մը մանրամասնութիւններ, իմ ընկեր: Եւ ես քեզմէ սորվեցայ սրտաբուլի տալ, քա-





նի տալը ապահով փոխանցման պայմաններէն մէկն է: Քեզի շատ պիտի կարօտնամ: Ես կը կարօտնամ նաեւ քեզ լուսանկարելու այդ խաղի պահերը... Ով դու մեծ... Սիրող մարդ»:

Մի քանի տարի առաջ Վահանը ապրած ու ստեղծագործած է Շարմ Էլ-Շեյխ եւ Տահապ, ներշնչուելով բնութենէն, ուր հոգին կը դառնար կրքոտ ու մտախոհութեան վարժութիւններ կ'ընէր: Բայց միշտ ալ կը վերադառնար իր բոյնը, ուր ծնած ու մեծցած է եւ ուր հարիւր մեթր հեռաւորութեամբ կը գտնուի նաեւ տանիքի վրայ իր աշխատանոցը, որ միշտ կը կանչէր զինք նոր ստեղծագործութիւններու համար:

Վահան ըմբոստ էր: Ան սիրահար էր այն սուրբ հողին, ուր ծնած էր. միշտ պայքարած է ազատութեան եւ արդարութեան համար՝ մի քանի անգամ վտանգելով իր կեանքը յեղափոխութիւններու ժամանակ:

1998-ին եւ 1999-ին մասնակցած է Ասուանի մէջ տեղի ունեցած քանդակի միջազգային սիմբոզիումին: Իսկ անհատական ցուցահանդէսներ ունեցած է 1992-ին Գահիրէ-Պերլին պատկերասրահ, 1995-ին եւ 1999-ին Զամալէքի արուեստի համալիր, Darb1718, 2008-ին, եւ Gallery Noot 2018-ին: 2021-ին «Հայր ու որդի» ցուցահանդէսին, Վահանի եւ իր որդւոյն Գայանի աշխատանքները ցուցադրուեցան, բացայայտելով անոնց առանձնայատուկ յարաբերութիւնը:

Խմբային ցուցահանդէսներ՝ Երկու անգամ Լամասաթ պատկերասրահ, Something Else at the Citadel, Սիուայի մէջ տեղի ունեցած աղի ժայռէ քանդակի առաջին ֆորում, Գահիրէի հինգերորդ միջազգային սերամիքական պիէնալ եւ քանդակներու երկրորդ ցուցահանդէսը՝ արուեստի պալատ: Պարգեւատրուած է 6-րդ եւ 9-րդ երիտասարդաց ցուցահանդէսին, 1994-ին եւ 1997-ին:

Վահանի ունեցած սէրը կեանքին ու մարդկանց, ինչպէս նաեւ կենդանիներու

հանդէպ իւրայատուկ էր, իր արկածախնդիր հոգին ու համարձակութիւնը զինք կ'առաջնորդէին, վարակիչ ազդեցութիւն կը թողէր ան իր շրջապատին վրայ, անկախ հիասթափութիւններէն եւ յուսախաբութիւններէն: Մենք դեռ շատ ծրագիրներ ունէինք միասին կատարելիք: Ես ամուր պիտի գրկեմ մեր զրոյցները արուեստի ու կեանքի մասին: Կարօտով պիտի փնտռեմ ձայնը ականջիս, մեր ծիծաղը, խանդը, խելայեղ համոզմունքները, պոհեմական ոճը, զոր չէի հասկնար անցեալին, մինչեւ զայն գտայ իմ մէջս եւս, թերեւս շնորհիւ Վահանին: «Ճիշտ ճամբան բռնած ես», - երբեմն կ'ըսէր ինծի: Ես նոյնիսկ կ'ընդունէի անոր յամառութիւնը: Ան պարզ էր, մաքուր, պարզ ու մաքուր ինչպէս նորածին հոգին: Վահանն այն ըմբոստն էր, որուն կը սքանչանայի: Իր խոնարհութեան համար ան դարձաւ անյայտ, բայց նաեւ յայտնի նկարիչ: Վահանի թողած ժառանգութիւնը, մտքերն ու համոզմունքները, անոր արտասովոր գործերը յաւերժ պիտի մնան մեր բոլորին հետ:

Վահանի վերջին հանդիպումը ընտանիքին հետ եղբօրը 60-ամեակին էր, այս աշխարհէն հեռանալէն չորս օր առաջ: Հազուադէպ է որ միանար նման առիթներու, քանի որ իր արուեստագէտի աշխարհին մէջ խորասուզուած էր: Սակայն այդ օր Վահան եկած էր մեզի բոլորիս հրաժեշտ տալու:

Վահանը իր ետին թողուց մայրը, կինը եւ 13-ամեայ որդի Գայանը, հինգ քոյրերն ու եղբայրը:

**Արուեստագէտին մահագոյժը լոյս տեսած է եգիպտական անգլիապառ շաբթաթերթ «Ալ-Ահրամ Ուիքլի»ի մշակոյթային էջով, 24 Հոկտեմբեր Հինգշաբթիի տպուած տարբերակին մէջ:**

<https://english.ahram.org.eg/NewsContent/50/1205/533988/AIAhram-Weekly/Culture/;dieu-Vahan-Vahan-Telpian—October,—October,—.aspx>



## Մեր Կորուստները

### ԱՆՆԱ ՆՇԱՆԵԱՆ (1932-2024)

92 տարեկան հասակին իր մահկանացուն կնքեր է նախկին եգիպտահայ, օփերային սօփրանո, մեներգչուհի Աննա Նշանեան, 24 Յուլիս 2024-ին, Լոս Անճեյլըսի մէջ, Գալիֆորնիա, ԱՄՆ:

Աննա Փափազեան ծնած է Գահիրէ, 1931 թուականին:

Աւարտեր է Գահիրէի Գալուստեան նախակրթարանը:

Երգի դասերու հետեւեր է իտալացի փրոֆէսոր Պոճոլինոյի, ապա ֆրանսացի երգչուհի Մատլէն Սուրոնի քով:

Իր առաջին բեմ ելլելը որպէս սօփրանո երգչուհի եղած է Գահիրէի մէջ, 1945-ին, Անոյշի դերով, «Անոյշ» օփերային մէջ:

1952-ին Երեւանի մէջ ելոյթ ունեցեր որպէս մեներգչուհի: Իսկ 1959 թուականին, Խորհրդային Հայաստանի ղեկավարութեան հրաւերով Հայաստան փոխադրուել է, բնակութիւն հաստատելու համար:

1963 թուականին աւարտեր է Կոմիտասի անուան Երեւանի բարձրագոյն երաժշտանոցը եւ դարձեր Օփերայի եւ Պալէի ակադեմական թատրոնի մեներգչուհի:

Կ'ամուսնանայ Նշանեանի հետ եւ կ'օգտագործէ ամուսնին մականունը:

1980-ին Ամերիկա կը գաղթէ:

Համերգներով ելոյթ ունեցեր է բազմաթիւ երկիրներու մէջ՝ Խորհրդային Միութիւն, Չէքոսլովաքիա, Ֆրանսա, Եգիպտոս, Լիբանան, Գանատա, Ամերիկա, Աւստրալիա եւ Սուրիա, կատարելով մեծ երգահաններու, ինչպէս Մոցարթի, Մասսընէի, Պիզէի, Վերտիի, Մուսորսկիի եւ այլոց գործերը:

Օփերային դերերգներուն մաս կը կազմեն Ա. Յարութիւնեանի «Սայաթ-Նովա» (Իշխանուհի Աննա), Ա. Տիգրանեանի «Դաւիթ Պէկ» (Շուշան), «Անոյշ» (Անոյշ), Տ. Չուխաճեանի «Արշակ Երկրորդ» (Օլիմպիա), Վերտիի «Թրավիաթա» (Վիոլետա), Վերտիի «Օթելլօ» (Տէգտէմոնա) եւ այլ դերեր:

Աննա Փափազեան-Նշանեան կը գտնենք նաեւ ֆիլմերու մէջ, ինչպէս Հրաչեայ Ղափլանեանի «Քաղաքավարութեան Վնասները» 1964, «Մէտուէօ Ժագը եւ Ուրիշներ» 1964, «Երգում է Աննա Նշանեանը» 1976:

Ստացեր է կարելոր շքանշաններ եւ մետալներ, ինչպէս

ՀԽՍՀ վաստակաւոր արտիստ, 1970

ԽՍՀՄ շնորհակալագրական պատուոգիր, 1977

«Famous Opera Singer»ի կոչում, ԱՄՆ

Հայաստանի Մշակոյթի Նախարարութեան ոսկի մետալ, 2013



## Մեր Կորուստները

### ԿԱՐՊԻՍ ԱՓՐԻԿԵԱՆ (1926-2024)

Հոկտեմբեր 15 կեանքէն հեռացեր է երաժշտական ուրոյն ճաշակի, նուիրումի եւ տաղանդի տէր արուեստագէտ Ֆրանսահայ խմբավար, երաժշտահան, նախկին եգիպտահայ Կարպիս Ափրիկեանը, որ ծնած էր 1926-ին, Աղեքսանդրիոյ մէջ:

Աւելի քան վաթսուն տարի Ափրիկեանը Փարիզի «Սիփան-Կոմիտաս» երգչախումբին անխոնջ ղեկավարն էր: Ի դէպ, երգիչներուն ճնշող մեծամասնութիւնը ոչ-հայեր էին:



Ափրիկեանի տաղանդով եւ դասական նրբաճաշակութեամբ, երոպացի երաժշտասէր հասարակութիւնը հաղորդակից դարձեր է Կոմիտասի, Բարսեղ Կանաչեանի, Ալեմշահի գործերուն բացառիկ մեկնաբանութեամբ եւ բացայայտեր է հայ խմբերգային արուեստի եւ հայ հոգեւոր երաժշտութեան դարերու կնիքն ու խորութիւնն ունեցող ժառանգութիւնը:

Բարեբախտաբար Ափրիկեանի վաստակը լիովին գնահատուեր է՝ բարձրագոյն պետական պարգեւներու արժանացեր է իր ծննդավայրին՝ Եգիպտոսի եւ Ֆրանսայի մէջ, ուր ապրեր է իր կեանքին մեծ մասը: 2021-ին ստացեր է Ֆրանսայի բարձրագոյն՝ «Արուեստի եւ գրականութեան հրամանատար» տիտղոսը (Commandeur d'art et de littérature):

2009 թուականին Հայաստանի մէջ արժանացեր է Մովսէս Խորենացի մետալին:

2006 թէ 2007 թուականին, «Համազգայինի» հրաւերով, երկրորդ անգամ Հայաստան կու գայ: Արամ Խաչատրեան համերգասրահին մէջ, իր ղեկավարութեամբ և սիմֆոնիք նուագախումբով կը հնչէ իր հեղինակած «Սասունցի Դաւիթ» օրաթորիան:

Իրայատուկ է Բարսեղ Կանաչեանի «Նանոր» գործին Ափրիկեան մեկնաբանութիւնը:

Ափրիկեան, հակառակ իր արուեստագէտի մեծութեան, եղած է համեստ մարդ, խոնարհ, եւ քիչ մըն ալ տխուր:

Յիշատակը վառ մնայ մեծ երաժիշտ, արուեստագէտ եւ գլխագիրով Մարդ Կարպիս Ափրիկեանին:

**Լիլիթ Գալստեանի դիմապատկի էջէն քաղուած**



## ԻՐԱԲՑԻՆ

«2023-ին Պելճիքայի բնակչության 20%ը օրինաւոր կերպով երկիր մտած գաղթականներէ բաղկացած է», կը տեղեկացնէր France 24-ի լրատուութեան կայանի խօսնակը: «Արդեօք ապօրինի մտած, այս համրանքէն վրիպած ու կայք հաստատած քանի՛ քանիներ կան հոն» կը մտածէի, երբ յանկարծ միտքս եկաւ Րասա Պաքէր Ֆախէրը:

2006-ի Հոկտեմբերին էր, երբ մեր շէնքին դռնապանը լուր բերաւ, որ Իրաքցի մը յարկաբաժին կը փնտռէր մեր թաղին մէջ: Այդ օրերուն, մանաւանդ Դեկտեմբեր 2003-ին Սատտամ Հիւսէյնի անկումէն ի վեր, շատ փորձանքներ եկան Իրաքի գլխուն: Արեւմտեան երկիրները, գլխաւորութեամբ Միացեալ Նահանգներուն եւ Մեծն Բրիտանիոյ, Իրաքի ժողովուրդը բռնակալ Սատտամէն «ազատագրելու» եւ զանգուածային ոչնչացման զէնք փնտռելու պատրուակով, ծաղկած երկիրը կործանեցին, քարիւղը կողոպտեցին, դարերու իրերայաջորդ քաղաքակրթութիւններու թողած հնութիւնները գողցան, Իսլամական զինեալ շարժումներ ստեղծեցին եւ քաղաքացիական կոտորածներ հրահրեցին:

Իրաքցի մեծ թիւով բարեկեցիկ ընտանիքներ, լքելով իրենց հայրենիքը, արդէն իսկ ապաստանած էին Եգիպտոս: Հակառակ որ արաբական երկիրներուն, մանաւանդ Պարսից Ծոցի քաղաքացիներուն կը խուսափէինք յարկաբաժին վարձու տալ, սակայն Իրաքը, որ հայոց ցեղասպանութեան տարիներուն գաղթականներուն ապաստան տրամադրած էր, Սուրիոյ եւ Լիբանանի նման մասնաւոր տեղ ունէր մեր սրտերուն մէջ:

Բարձրահասակ, խարտեաշ մազերով, ճերմակամորթ, խիստ քաղաքավար ու ազնուական կերպարանքով անձ մըն էր Րասա Պաքէր Ֆախէրը, որուն քով աչքերը գետին յառած կեցած պատանին, իր կրտսեր որդին էր: Տեղեկացանք որ բարեկեցիկ ընտանիքի մը շառաւիղն էին եւ



որ պատերազմին մահափորձի ենթարկուած էին: Տնցումը այնքան բուռն եղած էր, որ որդին այդ պահէն ի վեր պապանձած էր: Րասա, լքելով իր կինը, երկու աղջիկները եւ երեք ամուսնացած որդիները, մունջ տղան առած եկած էր Եգիպտոս:

«Երբ տեղաւորուիմ յարկաբաժինի մը մէջ, կինս եւ երկու աղջիկներս ալ պիտի գան, անկէ ետք նայինք ի՞նչ պիտի ընենք», ըսաւ Րասա:

Երբ ըսինք թէ հայ էինք, դէմքը ուրախութենէն ճառագայթեց:

«Իրաքցիները հայերը շատ կը սիրեն», սկսաւ Րասառը, - «Մեծ հայրս կը պատմէր, թէ 1915-ին, երբ մեր գերդաստանը տակաւին Մուսուլ կ'ապրէր, շատ Հայ գաղթականներու ապաստան տուած էր ան», ըսաւ Րասառը, «Աշխատասէր ու պարկեշտ են հայերը, Պաղտատի բոլոր պատկերահանները, լաւ արհեստաւորները, լեզու գիտցողներն ու ուսում առածները հայեր էին», բացատրեց ան:

Ի՞նչ զարմանալի է այս աշխարհը... Մօտաւորապէս դար մը առաջ, Րասաին մեծ-հօր շնորհիւ, հայ գաղթականներ փրկուեր էին եւ նոր կեանք սկսելու առի-

թը ունեցեր, հոգ չէ թէ իրենց հայրենիքէն հեռու, սակայն հիւրընկալ ավերու վրայ, ու հիմա այդ բարեկեցիկ ընտանիքին թոռը կարօտ էր հայ տանտիրոջ մը ապահով երդիքին:

Ժամանակ մը ետք կինն ու երկու աղջիկներն ալ եկան: Բատին ամուսնացած երեք որդիները լաւ գործ ունէին Իրաքի մէջ ու համակերպած էին նոր պարագաներուն հետ: Կինը շատ գոհ չէր իր նոր կեանքէն ու ժամանակ մը ետք երկու աղջիկները առած վերադարձաւ Իրաք: Բատին համար անկարելի էր վերադառնալ հայրենիք, իսկ որդին ձերբազատուելով իր անցուցած վախէն, սկսած էր խօսիլ ու կը մերժէր վերադառնալ Իրաք:

Օր մըն ալ Բատ ըսաւ մեզի, թէ «ձեռով մը» կարողացած էր իրենց համար Tourist visa ձեռք ձգել Պելճիքայի դեսպանատան միջոցաւ:

«Կասկածի առիթ չտալու համար օդանաւի երթուղարձի տոմսեր ապահովեցի եւ երեք օրէն կը մեկնիմք: Թեթեւ պիտի ճամբորդենք: Սենեակը շարուած վեց ճամպրուկները հոս պիտի ձգենք: Եթէ մէկ ամիս անցնի եւ չլսէք մեզմէ, ըսել է թէ մեր առաքելութիւնը յաջողութեամբ պսակուած է ու Պրիւքսէլ տեղաւորուած ենք», բացատրեց Բատ ցած ձայնով:

«Իսկ ի՞նչ պիտի ըլլան այս վեց ճամպրուկները», հարց տուի ես:

«Բաժնեցէք մէջիները որո՞ւ որ յարմար նկատէք», ըսաւ Բատ ու ողջագորուեցաւ ամուսինիս հետ.- «Ձեր լաւութիւնը բնաւ պիտի չմոռնամ, մեզի ապահով երդիք տուիք եւ հարազատէ աւելի անկեղծ ու անմիջական գտնուեցաք մեզի հանդէպ», ըսաւ ան յուզմունքով:

Ամիս մը անցաւ ..., ո՛չ մէկ լուր Բատէն: Շաբաթ մըն ալ համբերեցինք ու բացինք ճամպրուկները, որոնք բերնէ-բերան լեցուն էին Իրաքի այր մարդու տարազներով, բաճկոններով, տաբատներով ու շապիկներով: Թաղին դռնապաններուն, գիշերապահներուն եւ ինքնաշարժ լուացողներուն բաժնեցինք բոլորը, որոնք ի սրտէ յաջողութիւն մաղթեցին



Բատին, իր նոր կեանքին մէջ:

Մայիս 2024-ին Եւրոպական տարբեր քաղաքներուն մէջ հակա-Իսրայէլ ցոյցեր սկսած էին, Ղազզայի պաղեստինցիներուն հանդէպ գործած ցեղասպանութեանը համար: Ի տես քաղաքակիրթ երկիրներուն, օժանդակութեամբ Միացեալ Նահանգներուն եւ ի լռութեամբ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան ու Մարդկային Իրաւունքներու Պաշտպանութեան Կազմակերպութիւններուն, հազարաւոր Պաղեստինցի մանուկներ, կիներ ու անզէն այրեր կը կոտորուէին:

Հեռուստացոյցին կայանները ցոյց կու տային եղած բողոքներուն արշաւները: Յանկարծ ուշադրութիւնս գրաւեց Պելճիքայի մէջ եղած ցոյցերուն ղեկավարներէն մէկը, որ Պաղեստինի գլխաւորը վեր բարձրացուցած լիաթոք կը պոռար: Բատին որդին էր... Ահաւասիկ ան կը գոռար անարդարութեան, դաւաճանութեան, անգթութեան ու անտարբերութեան դէմ, որոնք նախ աւերած էին իր խաղաղ Իրաքը, ապա Սուրիան, Եմէնը, Լիպիան, Սուտանը ու այժմ Ղազզան, եւ սպանալիքի տակ դրած էին Լիբանանի ու Յորդանանի խաղաղութիւնը:

Բնաւ զարմանալի պիտի չըլլայ եթէ մօտ ապագային Եւրոպայի ժողովուրդին ո՛չ թէ միայն 20%ը, այլ 50%ը գաղթականներէ բաղկացած ըլլայ:

**Սօսի Ներքրեան-Յակոբեան**  
**Յունիս 2024**



## ԱՂԵՔՍԱՆՆԵՐԻ ՅՈՒՆԱ-ՀՌՈՄԷԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ ՎԵՐԱԲԱՑՈՒԱԾ

11 Հոկտեմբեր 2023-ին, 18 տարիներ փակ մնալէ ետք, Աղեքսանդրիոյ Յունա-Հռոմէական թանգարանին բացումը կատարեց Վարչապետ Մոսթաֆա Մատպուլի, որուն կ'ընկերակցէին Զբօսաշրջութեան եւ Հնագիտութեան նախարար Ահմատ Իսա, Տեղական Զարգացման Նախարար Հիշամ Ամնա, Մշակոյթի Նախարարուհի Նէվին Էլ-Քելանի եւ Աղեքսանդրիոյ Կառավարիչ Մոհամէտ Էլ-Շէրիֆ:

Թանգարանի տնօրէն Մոհամէն Օսման բացատրեց, թէ 2005-ին որոշում առնուած է փակել թանգարանը, սկսելու համար վերանորոգութեան եւ արդիականացման աշխատանքներուն, որոնց խիստ կը կարօտէր հինաւորց այս թանգարանը: Պիւտճէի չգոյութիւնն ու 2011-ի յեղափոխութիւնը պատճառ դարձան որ ո՛չ մէկ աշխատանք կատարուի մինչեւ 2018:

Արդիական թանգարանները մեծապէս կը տարբերին սովորական թանգարաններէն, ուր հնութիւնները պարզապէս քովէ-քով կը շարուէին, կարծէք շտեմարանի մէջ ըլլային անոնք: Այժմ ստեղծուած է թանգարանագիտութեան ճիւղը, որուն միջոցով լուսաւորութեան ու մթութեան, գոյնի, լուսութեան ու խաղաղութեան ընդմէջէն այցելուն կը փոխադրեն ա՛յն շրջանը, որուն նուիրուած է թանգարանը:

Յունա-Հռոմէական թանգարանին վերանորոգումը ժամանակի անընդհատութիւն ստեղծած է, հնութիւնները ցուցադրելու մէջ նկատի առնելով ժամանակագրական (chronological), բներգական (thematical), լուսաւորութեան եւ ապահովութեան սարքաւորումները:

Թանգարանը կը բաղկանայ երկու յարկի վրայ գտնուող 30 սրահներէ, որոնց մէջ ցուցադրուած են Աղեքսանդրիոյ եւ Ապու Քիրի ցամաքէն եւ ծովուն յատակէն յայտնաբերուած հնու-



թիւններ, Յունական շրջանէն մինչեւ Հռոմէական շրջան, մօտաւորապէս 975 տարիներ, որոնց մէջ ընդգրկուած են նաեւ Հին Եգիպտական, Ղպտի եւ Բիւզանդական քաղաքակրթութիւնները:

Թանգարանը շինուած է 1892-ին, իսկ բացումը կատարած է Խտի Ապպաս Հէլմի Բ.ը, 1895-ին: Վերանորոգման ընթացքին այս պատմական շէնքին վեց սիւներէ բաղկացած neoclassic ոճով ճակատը պահպանուած է, մինչ բուն շէնքը բոլորովին նոր է, ապակաշէն ու քարաշէն խառնուրդ մը, պէտք եղած լոյսի-խաւարի խաղերը ապահովելու համար:

Աղեքսանդրիոյ Յունա-Հռոմէական թանգարանին վերակենդանացմամբ, անիկա կը ներկայանայ որպէս Միջերկրականի ափերուն վրայ ամենակարեւոր թանգարաններէն մին, որ շուտով պիտի գրաւէ մեծ թիւով զբօսաշրջիկներու ուշադրութիւնը:

**Սօսի Ներերեան-Յակոբեան  
Փետրուար 2024**





## ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

### ԵՐԳԻԾԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՑՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

12 Օգոստոս 2024-ին բացումը կատարուել է Եգիպտոսի Միջազգային մուլտֆիլմի Ցրդ հաւաքին, որուն պատուոյ հիւրն էր Սպանիան:

Հաւաքին բացումը կատարել է Մշակոյթի նախարար դոկտ. Ահմատ Հաննօ եւ իր խօսքին մէջ բարձր գնահատանքով արտայայտուել է Եգիպտացի ողբացեալ դերասան Սամիր Ղանէմի մասին, որուն նուիրուած է այս ցուցահանդէսը:

Ցուցահանդէսը տեղի ունեցած է Կէզիրէի Մահմուտ Մուխթար մշակոյթի կեդրոնին մէջ եւ կը շարունակուի մինչեւ 22 Օգոստոս 2024:

Ցուցադրուած են աւելի քան 150 գործեր իրագործուած աշխարհի տարբեր երկիրներու նկարիչներուն կողմէ, որոնք կ'արտայայտեն աշխարհի մէջ այսօր ծանրօրէն զգալի հարցեր, ինչպէս ընկերային ցանցերուն ժխտական ազդեցութիւնը, կլիմայական մեծ փոփոխութիւնները, պաղեստինեան հարցը եւ այլն:

Ցուցահանդէսին մասնակցած է նաեւ Հայաստան, Միհրդատ Գազազեանի գործերով:



### ԳԱՂԹԻ ԹԱՆԳԱՐԱՆ

Մեկպուրնի ներգաղթի թանգարանը այս օրերուն կը ներկայացնէ գրաւիչ ցուցահանդէս մը, որ լուսարձակի տակ կը դնէ գաղթականներու պատմութիւնները, իրենց իրերուն ընդմէջէն: Արուեստի եւ ուրախ գոյներու ընդմէջէն ցուցահանդէսը գեղեցիկ կերպով կը ներկայացնէ Մեկպուրնի բոլոր քաղաքացիներուն մարդասիրութիւնը: Հարկ է նշել, որ այս ցուցահանդէսին մասնակցած բոլոր արուեստագետները Մեկպուրն ապրող գաղթականներ են:



Չի նշուիր թէ այս գաղթականները ուրկէ՞ եւ ի՞նչ պայմաններու տակ Մեկպուրն հասեր են, բայց դիտելով ցուցադրուած գործերը, մարդ կը համոզուի, թէ անոնք ուրախ են զիրենք որդեգրած քաղաքին մէջ:

### ԻՍԼԱՄԱՑԱԾ ՀԱՅԵՐ

Այնթապի մէջ «Նար» արուեստի միութեան եւ «Տէրսիմի նոր օր»-ի համագործակցութեամբ արդէն երրորդ անգամ կազմակերպուած կարճ ժապաւէններու փառատօնի ծիրէն ներս ցուցադրուեցաւ նաեւ Նակեհան Ուսքանի «Գողտրիկ տուն Ատանա» («Sweet Home Adana») վաւերագրական ժապաւէնը, որուն հիմնական նիւթը իսլամաց(ու)ած հայութիւնն է:

Ժապաւէնի ցուցադրութենէն ետք բեմադրիչ Նակեհան Ուսքան պատասխանեց հանդիսատեսներու հարցումներուն եւ տեղեկու-





թիւններ տուաւ ժապաւէնի նկարահանման աշխատանքներուն մասին: Ան մասնաւորապէս նշեց, որ ինք 27 տարեկան էր, երբ իմացաւ, որ մօրենական մեծ մայրը հայ է: Երբ առաջին անգամ այցելած է Ատանա, չէր մտածած նման վաւերագրական ժապաւէն նկարահանելու մասին եւ հետաքրքրուած չէր իր անձնական պատմութիւնը ներկայացնելով, որովհետեւ այդ մէկը բարդ բան մըն էր: Հայկական հարցը իրեն համար միշտ քաղաքական կողմ ունեցած է: Ան ըսաւ, որ այս ժապաւէնին մէջ իր արեան կապը առաջին տեղը չի գրաւեր եւ, ըստ էութեան, այդ պատմութիւնը առանձնապէս գեղեցիկ ալ չէ, աւելցնելով, որ նմանատիպ բազմաթիւ պատմութիւններ կան, եւ կ'ըսուի, թէ այդպէս իսլամաց(ու)ած 4 միլիոն հայ կ'ապրի Թուրքիոյ մէջ: Ասիկա ոչ միայն իր, այլ միլիոնաւոր մարդոց պատմութիւնն է:

### **ՅԱՍՄԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ**

Ամերիկա բնակող երիտասարդ եւ շնորհալի երաժիշտ Յասմիկ Յարությունեան ընթացիկ տարուան Յուլիս-Օգոստոս ամիսներուն, մասնակցելով «Monolit festival» միջազգային առցանց մրցոյթ-փառատօնին՝ արժանացեր է առաջին մրցանակի եւ հրաւիրուեր է Սպանիա, ուր պիտի կատարուին իր ստեղծագործութիւնները:



Յարութիւնեան տասը գործերով ներկայացեր է այս մրցումին, որ նախկին տարիներուն տեղի ունեցեր է Ամերիկա, Ֆրանսա, Գերմանիա, Յունաստան, Աւստրալիա, Սպանիա, Անգլիա, Արժանթին, Իտալիա եւ Գանատա:

Յարութիւնեանի պատանեկան «Իմ Քաղաք» երգը մեծ գնահատանքի արժանացեր է:

### **ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ**

Արցախի մշակութային ժառանգութեան մշտադիտարկում իրականացնող [monumentwatch.org](http://monumentwatch.org) կայքը կը գրէ.

«Օրեր առաջ ատրապէյճանական Culture of Azerbaijan կայքը տարածեց յայտարարութիւն Արցախի «Մենք ենք, մեր սարերը» (Տատիկ-պապիկ) յայտնի յուշարձանին մասին՝ նշելով, որ անիկա կառուցուած է Ատրապէյճանի իբրեւ թէ Խանքենդի քաղաքին մէջ 1967 թուականին եւ «Ատրապէյճանի բազմամշակութային և ազգային-կրօնական հանդուրժողականութեան բազմաթիւ օրինակներէն մէկն է»:



Հանրայայտ է, որ յուշարձանը հայկական Արցախի ժամանակակից խորհրդանիշներէն մէկն է եւ որ անիկա ստեղծուած է որպէս նշան եւ խորհուրդ երկրամասի հայ ինքնութեան:

### **“HOPE RISING”**

Գալիֆօրնիոյ Հայ-ամերիկեան թանգարանը եւ մշակութային կեդրոնը հպարտութեամբ ներկայացուցած են «Hope Rising» ծրագրի համաշխարհային առաջին կատարումը, հայկական պարով, երաժշտութեամբ եւ մշակոյթով:

«Hope Rising» ծրագիրը Nico Nazar Creative-ի արտադրութիւնն է՝ Գէորգեան պարարուեստի ակադեմիայի գլխաւոր դերակատար Ալպեր Պլպուլեանի հեղինակային երաժշտութեամբ:

### **«ՀՈՍՈՂ ԼԱՎԱՇԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ»**

Լուչիա Իսահակ Սերոպեանի հեղինակութեամբ Օգոստոս 2024-ին հրատարակուեր





է մանկական «Հոսող լաւաշի ժառանգութիւնը»: Այս սրտառուչ հեքեաթը կը խօսի հայկական մշակոյթին մասին, լաւաշին ճամբորդութիւններուն միջոցով:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմէ լաւաշ պատրաստելը, որպէս մարդկութեան ոչ նիւթական մշակութային ժառանգութիւն յայտարարութեան տասնամեակին հետ այս գիրքը հինգ տարեկանէն վեր ընթերցողներուն համար եզակի պատուհան մըն է դէպի հայկական ավանդութիւնները, լեզուն եւ սովորութիւնները:

Գիրքը գրուած է անգլերէն:



**ՍԷՏԷՖՃԵԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՍՏՂԸ**

Ճուլիա Սէտէֆճեանի Փարիզի ճաշարանը՝ Baieta-ն արժանացեր է Michelin-ի աստղին:

Սէտէֆճեան ծնած է Նիցցա (Իտալիա), հայ հօրմէ եւ սիցիլիացի մօրմէ, եւ կը համարուի ֆրանսայի ամենէն երիտասարդ խոհարարը, որ արժանացեր է այս աստղին, առաջին անգամ 21 տարեկանին (տե՛ս «Տեղեկատու» թիւ 103, նոր շրջան, Ապրիլ 2022):

2012 թուականին կը տեղափոխուի Փարիզ եւ կը սկսի աշխատիլ Les Fables de La Fontaine ճաշարանին մէջ: 2013 թուականին կը դառնայ ճաշարանին խոհարարը, իսկ յետոյ՝ 2015-ին՝ գլխաւոր խոհարարը երբ միայն 20 տարեկան էր:

2018-ին Փարիզի մէջ կը բանայ իր սեփական ճաշարանը՝ Baieta-ն, որ իր առաջին Michelin աստղը կը ստանայ 2019 թուականին՝ բացումէն ընդամենը 10 ամիս ետք:



**ՄԱՐԻ ՄԻԿԷԼԸՐ ՍԻՄՈՆԵԱՆ**

Վիէննայի Պէթովէնի անունը կրող 2024-ի երաժրշտական մրցումին առաջին մրցանակը նուաճեց ֆրանսահայ սօփրանօ՝ Մարի Միկլըր Սոմոնեանը:

«Ես շատ շնորհակալ եմ այս մրցանակին համար անհամբեր եմ այս նոր ճամբորդութիւնը շարունակելու», -ըսեր է երգչուհին ընկերային ցանցերու իր էջերուն մէջ:

Մրցումը տեղի ունեցեր է Աւստրիոյ մայրաքաղաք Վիէննայի մէջ, Սեպտեմբերի 19-20-ին:



**ՃԱՏՐԱԿԻ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԽԱՂ ՄԸ**

Այս արտասովոր խաղը տեղի ունեցեր է Լենինկրատի մէջ (Սէնթ Փիթըրսպուրկ) 1924 թուականին: Այս խաղին մէջ քարերը փոխարինուեր են մարդոցով, տարօրինակ մթնոլորտ մը ստեղծելով: Խաղը խաղացողները եղեր են վարպետներ Պետտր Ռոմանովսկին եւ Իլիա Ռաբինովիչը՝ այդ ժամանակաշրջանի ամենէն յայտնի վարպետներէն մեկը:

Խաղը տեւած է հինգ ժամ, բացօթեայ հսկայ ճատրակի տախտակի վրայ, որ դրուած էր Ձմեռնային պալատին դիմաց: Այս խաղը ամենամեայ ձեռնարկներու մէկ մասն էր, որ ստեղծուած էր Խորհրդային Միութեան մէջ, ճատրակը խթանելու համար:

Առաջին նման խաղ տեղի ունեցած է Սնոլենսկի քաղաքին մէջ, 1921 թուականին եւ դարձած համաշխարհային իրադարձութիւն: Նպատակն էր խթանել հանդիսատեսներուն ռազմավարական մտածողութիւնը:



Յայտնի չէ, թե ով է յաղթեր է 1924 թուականի այս խաղին:

Ճատրակը սովորական եւ պարզ խաղ չէ, այլ կրթութիւնն ու ռազմավարական մտածողութիւնը խթանելու մարտահրաւեր եւ միջոց է: Լենինկրատի ընտրութիւնը որպէս այս խաղին վայրը, պատահական չէր: Քաղաքը Խորհրդային Միութեան մշակութային եւ մտաւորական կեդրոնն էր, եւ կատարեալ միջավայր՝ նման ձեռնարկի համար:



### ՓԱՐԱՃԱՆՈՎ 100

Փարաճանովի 100-ամեակին առիթով, Հոկտեմբեր 14-ին եւ 15-ին նոր պալէ մը ներկայացուեցաւ Երեւանի Օփերայի եւ Պալէի թատրոնին մէջ:

Մուրադ Մերզուկի բեմադրութեամբ ֆրանսական-հայկական այս ներկայացումը կատարեր են «Ballet Preljocaj Junior» եւ հայաստանեան «Բարեկամութիւն» պարային խումբերուն անդամները: Ներկայացումը ընդունուեր է մեծ խանդավառութեամբ:



### ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Œuvre d'Orient ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ կազմակերպած «Հայաստան, Լեռներու Հաւատքը» ցուցահանդէսը ցուցադրուած է Սեն Պերթրան եկեղեցւոյ մէջ, մինչեւ Օգոստոս 19, ամէն օր, առաւօտեան 10-էն մինչեւ իրիկուան 7-ը:

Ցուցահանդէսը կազմուած է 20 ինքնակառավարուող վահանակներէ, որոնք պատրաստուեր են ինստիտուտի անդամ, արեւելագէտ, École Pratique des Hautes Études-ի ուսումնասիրութիւններու տնօրէն Ժան-Փիէռ Մահէի հետ համագործակցաբար: Բացման օրը տեղի ունեցեր է նաեւ սեմինար մը, նոյն նիւթին շուրջ:

Այս ցուցահանդէսը հրաւեր մըն է, Հայաստանի եպիսկոպոսներուն, քահանաներուն, կրօնական համայնքներուն եւ Մերձաւոր Արեւելքի հայկական ծովներուն կողքին աւելի լաւ ճանչնալու Արեւելքը եւ անոր առաքելութիւնները:

Մուտքը եղած է անվճար:





## Հ.Մ.Ը.Մ. ԿԱՄՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ

6, 7 եւ 8 Սեպտեմբեր 2024-ին տեղի ունեցաւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ Կամքի պասքէթ-պոլի տարեկան միջակումբային խաղերու մրցաշարքը, հովանաւորութեամբ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի, Առաջնորդ Եգիպտոսի Հայոց Թեմին եւ նախագահութեամբ Տէր եւ Տիկին Վահէ Պէն-Օհանեանին, Ատենապետ Աղեքսանդրիոյ Թեմական Ժողովին:

Ուրբաթ օրուան առաջին մրցումը հիւրընկալ ակումբին եւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներուն խումբերուն միջեւ էր: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբը՝ որմէ այլեւս կը բացակային փորձառու ու լաւ խաղացող երեք մարզիկուհիներ, իր նորեկ մարզիկուհիներով աննախանձելի կացութեան ենթարկուած էր Կամքի ներդաշնակ ու լաւ մարզուած աղջիկներուն դիմաց: Մրցումը աւարտեցաւ ի նպաստ Կամքի աղջիկներուն 52-7 արդիւնքով:

Օրուան երկրորդ մրցումը Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Սրբուհի Թերեզայի տղոց խումբերուն միջեւ էր, խաղ մը որ քանի մը շրջանէ ի վեր բուռն մրցակցութեան վերածուած է: Աղեքսանդրիոյ մարզիկները դաշտ իջան ինքնավստահ ու խանդավառ, եւ կարողացան Սրբուհի Թերեզայի տղոց «պարտուած»ի դիրքին մէջ դնել սկիզբէն ի վեր: Հակառակ որ երրորդ քառորդախաղին Սրբուհի Թերեզայի մարզիկները, բարելաւելով իրենց խաղը, նուազեցուցին արդիւնքի տարբերութիւնը, սակայն Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը յաղթական հանդիսացան 64-53 արդիւնքով:

Շաբաթ օրուան յայտագիրը սկսաւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ Կամքին տղոց խումբերուն միջեւ խաղով, ուր նախորդ օրուան իր տարած յաղթանակէն քաջալերուած, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը գերազանց խաղարկութեամբ մը յաղթեցին, 60-54 արդիւնքով:

Յաջորդ մրցումը Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ Արարատին երկսեռ խումբերուն միջեւ էր: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները սկիզբէն իսկ տիրապետեցին խաղին եւ իրենց լաւ խաղարկութեամբ

թիւ շատ մեծ տարբերութիւն արձանագրեցին ու պահեցին զայն: Մրցումը աւարտեցաւ ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներուն, 68-33 արդիւնքով:

Օրուան վերջին մրցումը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ Արարատի տղոց խումբերուն միջեւ էր, որ միշտ սիրտհատնում կը պատճառէ երկու խումբերուն համակիրներուն, սակայն ո՛չ այս անգամ: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը առաջին վայրկեանէն իսկ շշմեցուցին մրցակից խումբին թէ՛ մարցիկները, թէ՛ մարզիչները եւ թէ՛ ալ իրենց համակիրները, ու մինչեւ երկորդ քառորդախաղին աւարտը արդիւնքը հասցուցին 54-15-ի : Բախտէն լքուած ու յուսահատած՝ Արարատի մարզիկները յանձնուեցան պարտութեան: Մրցումը աւարտեցաւ 102-40, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ:

Հ.Մ.Ը.Մ. Կամքի վարչութիւնը Յառաջդիմասէրի պարտէզին մէջ ճաշկերոյթ մը կազմակերպած էր, որուն տոմսերը արդէն քանի մը օր առաջ սպառած էին:

Կիրակի, 8 Սեպտեմբերի աւարտական մրցումները սկսան ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ Կամքի աղջիկներուն միջեւ, որ աւարտեցաւ ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ, 59-36 արդիւնքով: Խմբապետուհի Լորիկ Տրդատեան ստացաւ բաժակը, որ նուիրած էր տիկին Մարի-Անթուանէթ Թօփալեան: Վարձքը կատար խումբին պատասխանատու տիկին Սեւան Տրդատեանին եւ իրեն օգնական Արեգ Աբգարեանին այս յաղթանակին համար:

Տղոց աւարտականը երկու ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻներուն միջեւ էր. խաղաղ մթնոլորտի մէջ հաճելի խաղ մը ներկայացուցին անոնք: Մրցումը աւարտեցաւ ի նպաստ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ, 76-43 արդիւնքով: Խմբապետ Արամ Աբիկեան ստացաւ բաժակը, որ նուիրած էին տէր եւ տիկին Պերճ Միսքեանները: Վարձքը կատար խումբին պատասխանատու Ռուբէն Սիմոնեանի եւ իրեն օգնական Արմէն Իրատեանի, այս յաղթանակին համար:

*Սօսի Ներեպեան-Յակոբեան  
Սեպտեմբեր 2024*



## ԳԱՀԻՐԷԻ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Հինգշաբթի, 26 Սեպտեմբեր 2024-ին սկսաւ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պասքէթ-պոլի տարեկան մրցաշարքը, իր աւանդական՝ 6 Հոկտեմբերի թուականէն առաջ: Մրցաշարքը կը հովանաւորէր Գեր. Տ. Աշոտ Եպս. Մնացականեան՝ բարեխնամ առաջնորդ, Եգիպտոսի հայոց թեմին եւ կը նախագահէին Տէր եւ Տիկին Պերճ Թերզեան՝ Պատուոյ Ատենապետ ՀԲԸՄի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին եւ ՀԲԸՄի Գահիրէի Մասնաճիւղին:

Թէպէտ «պասքէթ-պոլի» մրցաշարք էր, սակայն յայտագիրը սկսաւ ֆութ-պոլի դաշտին վրայ ոտնագնդակի մրցումով մը, ակումբին կրտսեր երկսեռ խումբին եւ Զահրաա էլ Դահրա խումբերուն միջեւ: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մարզիկները ինքնավստահ ու լաւ խաղարկութեամբ յաղթական հանդիսացան, 6-2 արդիւնքով: Վարձքը կատար Փիէռ Նորարեւեանին, որուն յարատեւ ճիգերուն շնորհիւ ակումբին ֆութ-պոլի խումբերը միշտ լաւ արդիւնքներ կ'արձանագրեն:

Հակառակ որ յայտագրին վրայ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց Բ. Խումբին եւ տեղական խումբի մը միջեւ մրցում կար, սակայն կամքէ անկախ պատճառներով ջնջուեցաւ:

Օրուան վերջին մրցումը Հ.Մ.Ը.Մ. Արարատի եւ Սրբուհի Թերեզայի տղոց խումբերուն միջեւ էր. Արարատի տղաքը սկիզբէն առաւելութիւն արձանագրեցին եւ մրցումը աւարտեցաւ ի նպաստ իրենց, 77-50 արդիւնքով:

Ուրբաթ, 27 Սեպտեմբերին առաջին մրցումը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 16 տարեկանէն վար եւ Հելիոպոլիս ակումբին տղոց միջեւ էր: Հակառակ որ մրցակից խումբին տղաքը աւելի հասակաւոր էին ու յաղթանդամ, սակայն ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պատանիները լաւ մարզուած էին, անոնք իրենց արագ խաղարկութեամբ կարողացան առաւելութիւն ապահովել եւ մրցումը աւարտեցաւ ի նպաստ իրենց, 41-36 արդիւնքով:



Յաղթական խումբը ստացաւ տէր եւ տիկին Ռոպեռ Թաշճեանի նուիրած բաժակը: Վարձքը կատար խումբին պատասխանատու Ռոպեռ Թաշճեանին, այս խումբին մարզիկներուն հետ իր տարած աշխատանքին համար:

Օրուան երկրորդ խաղը Հ.Մ.Ը.Մ. Արարատի եւ ՀՄԸՄ Կամքի աղջիկներուն միջեւ էր. Արարատի աղջիկները 66-25 արդիւնքով յաղթական հանդիսացան:

Վերջին մրցումը Հ.Մ.Ը.Մ. Արարատի եւ ՀՄԸՄ Կամքի տղոց խումբերուն միջեւ էր: Հակառակ որ երկրորդ քառորդախաղի ընթացքին Կամքի տղաքը կրցան թիւի տարբերութիւնը նուազեցնել, սակայն վերջ ի վերջոյ Արարատը յաղթեց, 67-45 արդիւնքով:

Շաբաթ, 28 Սեպտեմբերի յայտագրին վրայ եւս երեք մրցումներ կային: Առաջինը՝ 16 տարեկանէն վար աղջիկներու մրցումն էր, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Ալ Էնդակ ալ Հարպի խումբերուն միջեւ: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները իրենց հանդարտ, կազմակերպուած ու մաքուր խաղարկութեամբ շուտով թիւի մեծ առաւելութիւն արձանագրեցին, յուսահատութեան մատնելով մրցակից խումբը: Մրցումը աւարտեցաւ ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պարմանուհիներուն, 50-14 արդիւնքով ու անոնք ստացան բաժակը, որ նուիրած էր տիկին Տիանա Աւագեանը: Վարձքը կատար տիկին Տիանային իր տարած աշխատանքին համար, որուն շնորհիւ, մօտ



ապագային, երեց խումբին պիտի գան միանալ առաջնակարգ մարզիկուհիներ:

Օրուան երկրորդ խաղը երկու ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐներու երեց աղջիկներու խումբերուն միջեւ էր, Գահիրէի խումբը յաղթական հանդիսացաւ 46-23 արդիւնքով:

Վերջին խաղը երկու ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐներուն տղոց խումբերուն միջեւ բաւական միակողմանի մրցում էր. Գահիրէի խումբը յաղթեց 67-28 արդիւնքով:

Կիրակի, 29 Սեպտեմբերի աւարտական մրցումները խիստ հետաքրքրական էին: Առաջինը՝ Գահիրէի ՀՄԸՄ Նուպարի եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի աղջիկներուն միջեւ էր, ուր, ի տարբերութիւն նախորդ անգամներուն, թիւի տարբերութիւնը շատ մեծ չէր: Երկրորդ քառորդախաղի աւարտին արդիւնքը 28-24 էր ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի աղջիկներուն: Երրորդ ու չորրորդ քառորդախաղերուն ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐին աղջիկները կրցան քիչ մը առաւելութիւն ապահովել ու մրցումը աւարտեցաւ ի նպաստ իրենց, 53-47 արդիւնքով: Խմբապետուհի Մարինա Սիմոնեան-Պըլըքտանեան ստացաւ բաժակը, որ նուիրած էր Մարլօ Սիմոնեան: Վարձքը կատար խումբին պատասխանատու Սեւան Տրդատեանին եւ օգնական Արեգ Աբգարեանին, այս յաղթանակին համար:

Ժամանակը հասած էր վերջին՝ աւարտականին խաղին, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի տղոց խումբերուն միջեւ: Հակառակ որ հազիւ երեք շաբաթ առաջ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի տղաքը 60 թիւի առաւելութեամբ յաղթած էին Արարատին, սակայն այս անգամ խառնաշփոթ ու աններդաշնակ էին, ծախող արձակումներուն թիւը կը գերազանցէր յաջողներուն: Իսկ Արարատի տղաքը, անտեսելով իրենց կրած նախորդ ծանր պարտութիւնը, կը խաղային ինքնավստահ ու շատ յաջող կերպով:

Առաջին քառորդախաղը, որ սկսած էր պրկուած ջիղերով, վերջացաւ ի նպաստ Արարատին, 22-16 խոնարի արդիւնքով: Երկրորդ քառորդախաղին ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի տղաքը, քիչ թէ շատ բարելաւելով իրեց խաղը, հաւասարեցան 38-38 արդիւնքով: Երրորդ քառորդախաղը աւար-



տեցաւ ի նպաստ Արարատին, 52-48 արդիւնքով: Չորրորդ քառորդախաղի ընթացքին լաւ խաղարկութիւնը կը շարունակէր խոյս տալ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐէն: Մրցումի աւարտին կը մնար 6 երկվայրկեան ու Արարատը ապահոված էր երկու թիւի առաւելութիւն: Գնդակը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի ձեռքն էր, Արմէն Աբգարեան գերբնական փորձ մը ընելով երեք թիւի յաջող արձակում մը ըրաւ, նախ քան իրաւարարին մրցումը աւարատող սուլիչին հնչելը...: Խաղը աւարտեցաւ 70-69 արդիւնքով, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի տղոց:

Խմբապետ Արամ Աբիկեան ստացաւ բաժակը, որ նուիրած էին տէր եւ տիկին Սիմոն Տեփոյեան: Վարձքը կատար խումբին պատասխանատու Ռուբէն Սիմոնեանին եւ օգնականներ Ժիրայր Սուլթանեանին եւ Արմէն Իրատեանին, այս յաղթանակին համար:

Ակումբին եօթը պարմանուհիներէն բաղկացած խումբը, պարուսոյց Սիւզան Յակոբեան-Գարգուրի առաջնորդութեամբ, որ cheerleading-ի շարժումները





համադրած էր հայկական պարի քայլերուն եւ շարժումներուն հետ, շատ յաջող ներկայացում մը հրամցուց ներկաներուն եւ մեծապէս գնահատուեցաւ բոլորէն:

Շնորհակալութեան խօսք ունինք տէր եւ տիկին Վարդ Ալեքսանեանին, որոնք նուիրած էին մրցաշարքին բոլոր մետալները:

Շնորհակալութիւն տիկին Մարլին

Աւանեանին, որ մրցաշարքը վարեց յաջող ու հաճելի կերպով:

Ճյ Ռոպէռ Թաշճեանին հնչեցուցած ընտրեալ ու խանդավառ երգերն ու երաժշտութիւնը տօնական մթնոլորտ պարգեւեցին մրցաշարքին:

*Սօսի Ներերեան-Յակոբեան  
Սեպտեմբեր 2024*

## ԱՅՎԱԶՈՎԱՔԻՆ ԵՒ ԶԿՆՈՐԱԸ

Օր մը Այվազովսքին ծովափին նստած ձկնորսի տնակ կը նկարէր, պատերուն կախուած ուռկաններով: Տնակին տէր ձկնորսը կը մօտենայ եւ հետաքրքրութեամբ կը դիտէ:

-Նկարը վերջացնելէդ ետք քանիի՞ պիտի ծախես:

-Գործը գիտէ,- կը պատասխանէ Այվազովսքին,- այս նկարը առնուազն հինգ հազար ռուբլի կ'արժէ:

-Այդ գումարը ինծի՛ տուր, ես քեզի ոչ միայն տնակս կու տամ, այլ նաեւ ուռկանս, նաւակս ալ հետը,- կ'ըսէ ձկնորսը:



## ԱՆԴԱՄԱԿԱՆ

Խոր ցաւով լսեցինք ՀԲԸՄիութեան Շրջանակային Յանձնաժողովի  
ատենադպրուհի

Եւ Կոկանեան սրահի ատենապետուհի  
Տիկին Լալա Շամամեան-Նիկոլեանի մօր  
**ՍՈՆԱ ԱԹԹԱՐԵԱՆ-ՇԱՄԱՄԵԱՆԻ**

Մահը, որ պատահեր էր Շաբաթ, 19 Հոկտեմբեր 2024-ին, Հալէպի մէջ.  
«Տեղեկատու»ն իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ տիկին Լալա  
Նիկոլեանի եւ դստեր Լիային, քրոջը Սիւզիին եւ ընտանիքին, եղբօրը Գօգօ  
Շամամեանին եւ բոլոր սգակիրներուն:

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Աղաթօն գրադարանը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ գիրքերը.

-«Ստակ Շահելու Արուեստը», բանախօսութիւն Ֆինիաս Գէյլըր Պարնըմ,  
թարգմանեաց Գ. Գալէմքեարեան, հրատարակեց Յ. Գալէմքեարեան, Կ. Պոլիս, 1891,  
115 էջ.

-«Գործաւորք», իտալերէնէ թարգմանուած, Վենետիկ, Մխիթարեան Տպարան, 1874,  
213 էջ.

-«Դեսպան Մորկընթաուի Յիշատակները եւ Հայկական Եղեռնին Գաղտնիքները»,  
Անգլիերէն բնագիրէն թարգմանիչ Ենովք Արմէն, տպագր. Օ Արզումանեան, Կ. Պոլիս,  
1919, 350 էջ.

